

14.595

Ս. Ի. ԿԱԼԻՆԻՆ

Ի Ն Չ Տ Վ, Ե Յ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

32
4-15

32
4-15

48

26 SEP 2006

Պրովետարներ բոլոր յերկրաների, միացե՛ք

1 DEC 2009

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ԻՆՉ ՏՎԵՑ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ԱԾԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

ԲԱՂՍԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939



648
39

М. И. КАЛИНИН
ЧТО ДАЛА СОВЕТСКАЯ ВЛАСТЬ
ТРУДЯЩИМСЯ

Государственное издательство политической литературы
Ереван ● 1939

Վոչ հեռու ապագայում Խորհրդային Միության ամբողջ ժողովուրդը, տղամարդիկ և կանայք, սկսած 18 տարեկան հասակից, հավասար, ուղղակի ընտրություններով, գաղտնի քվեարկությամբ ընտրելու յե իր ներկայացուցիչները ԽՍՀՄ Գերագույն Խորհրդում:

Ի ուրբ հանրապետություններում, յերկրներում և մարգերում այժմ ծավալվել և նախընտրական կամպանիան: Շուտով սկսվելու յեն Գերագույն Խորհրդի ղեկավարության թեկնածուների առաջադրումը և քննարկումը, Խորհրդային Միության ժողովուրդների առաջ դրված բարձրական և տնտեսական պրոբլեմների քննարկումը: Մասսաների խիստ քննադատությանը կենթարկվեն իշխանության վատ աշխատող որդանները և խորհուրդների անպետք աշխատողները: Պետք և յենթադրել, վոր մի շարք ղեկավարում մենք կունենանք հակախորհրդային տարրերի յելույթներ:

Ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ ընտրություններն և՛լ ավելի կամրացնեն խորհրդային սոցիալիստական իրավահարգը:

Նախընտրական ժողովներում միլիոնավոր ընտրողներ խորհրդային յերկրի անցած ուղու հանրադրումարը կտան:

Իսկ ի՞նչ և ավել խորհրդային իշխանությունը ԽՍՀՄ ժողովուրդներին իր բանամյա գոյության ընթացքում: Ի՞նչ են ձեռք բերել խորհրդային իրավահարգի որով Խորհրդային Միության ժողովուրդները: Ավելի ճիշտ՝ ի՞նչ են ձեռք բերել Խորհրդային Միության ժողովուրդներն իշխանության խորհրդային ձևի որով՝ կոմունիստական կուսակցության ղեկավարության ներքո:

Քսան տարին մարդկային կյանքի համար փոքր ժամանակամիջոց չէ: Սակայն պետության համար, նրա գարգաց-

ման համար այդ շատ քիչ է, քանի վոր ժողովրդի զարգացումը շատ ավելի դանդաղ է ընթանում, քան առանձին մարդու զարգացումը:

Յեթե մենք հայացք գցենք Յեվրոպայի և Ամերիկայի ամենից ավելի կուլտուրական ժողովուրդների զարգացման վրա, ապա կտեսնենք, թե վորքան դանդաղ է ընթանում այդ զարգացումը և այն ել նա վոչ միշտ է առաջ ընթանում: Պատմության մեջ քիչ դեպքեր չեն յեղել, յերբ ամբողջ ժողովուրդներ դեզարգացիայի յեն յենթաբիկել, իսկ յերբեմն ել պատմության ասպարեզից լիովին անհետացել են: Բավական է ասել, վոր Չինաստանը մի ժամանակ համարվում էր աշխարհի ամենակուլտուրական պետութուններում: Բայց մեկը: Իսկ ա՞յժմ: Այժմ Չինաստանը թեպետ և ունի յեղ մեկը: Իսկ ա՞յժմ: Այժմ Չինաստանը թեպետ և ունի հսկայական տերիտորիա բազմամիլիոն բնակչութամբ, — այնուամենայնիվ նա հետամնաց յերկիր է, վորին իմպերիալիստական գիշատիչները շահագործում են շահվելու նպատակով և պատառ-պատառ են անում: Ժողովրդի ուղին հետադուրս է համար հարկավոր է գիտենալ նրա սկզբնական գրգռությունը:

Յեվ ահա այդպես ուրեմն, ի՞նչ տվեց խորհրդային իշխանութունը ԽՍՀՄ ժողովուրդներին: Յես կարծում եմ, գլխավորը, վճռողականը և հիմնականը, վոր տվեց խորհրդային իշխանութունը ժողովրդին — այդ այն է, վոր Խորհրդային Միության ժողովուրդները, սկսած ամենամեծերից մինչև ամենամիտքբաթիվները, վորոնք վոչ հեռավոր անցյալում յեղել են ծեծկված ու շահագործված, այժմ դարձել են իրենց սեփական բարրության տերը: Նրանք հնարավորութուն են ստացել կռելու իրենց սեփական բախտը: Ձախճախված ու վոչնչացված են շահագործող դասակարգերը և նրանց հետ միասին վոչնչացված են կրկրիանները, գործադրկութունը, չբավորութունը և մասսաների քայքայումը, վերացված է մարդուն մարդու ձեռքով շահագործելու հնարավորութունը: Կոլտնտեսային գյուղացիութունը վոչ միայն ազատված է կուլակների և կալվածատերերի շահագործումից, այլ ապահովված է հողով և ժամանակակից տեխնիկայով: Հին Ռուսաստանը «ժողովուրդ-

ների բանա» էր, իսկ ԽՍՀՄ՝ ժողովուրդների բարեկամության յերկիր:

Այս բոլորը մի՞թե չի վերջում այն մասին, վոր ԽՍՀՄ բանվորները և գյուղացիներն իրենց բախտի միակ տերերն են հանդիսանում: Յեվ վոչ վոքի չի հաջողվի խել այդ բախտը: Խորհուրդների Յերկրի ամբողջ ժողովուրդը, մեծից մինչև փոքրը, իր բոլոր ուժերը կտա խորհրդային հողի անձեռնմխելության համար, Լենինի — Ստալինի գործի համար, կոմունիզմի հայթանակի համար: Խորհրդային Միության ժողովուրդներն իրենց բախտը պահում են իրենց սեփական ձեռքերում: Նրանց յեռանդից, կամքից, հաստատակամությունից, աշխատունակությունից և աշխատանքում ցուցաբերվող համառությունից է կախված նրանց կյանքի նյութական ապահովութունը և կուլտուրական մակարդակի բարձրացումը:

Սա մեծ բարիք է: Յերկրադուրի և վոչ մի ժողովուրդ չունի այդ հնարավորութունը: Նա գրկված է դրանից, նա կաշկանդված է կապիտալիստական տիրապետության շղթաներով, նա կապիտալիստական հասարակության սպրտին է և գրկված է իր նյութական մակարդակի և կուլտուրական զարգացման երկան փոփոխութունների վրա ազդելու հնարավորութունից:

Խորհրդային Միության բանվորների, գյուղացիների և աշխատավոր ինտելիգենցիայի նվաճումները նրանով ել հենց նշանակալից են, վոր արդյունք են նրանց համատեղ աշխատանքի: Կոլեկտիվ աշխատանքը, մեծացնելով Խորհրդային Միության հարստութունները, միևնույն ժամանակ բարվոքում է նաև ամեն մի առանձին մարդու բարեկեցութունը:

Անհատական և կոլեկտիվ շահի այդ գուզորդումը, ամեն մի մարդու՝ իր ուժերը լիովին գործադրելու այդ հնարավորութունը — Խորհրդային Միության ամենահսկայական նվաճումն է:

ԻՆՉ ՁԵՌՔ ԲԵՐԻՆ ԽՍՀՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Ռուսական բանվոր դասակարգը, համեմատած յեվրոպական բանվորների հետ, ունի սոցիալիզմի գործի համար

մղած պայքարի վսչ յերկար, բայց փառապանծ պատմութիւնն: Կապիտալիստական եկոնոմիկայի զարգացումը Ռուսաստանում ընթանում էր ավելի դանդաղ տեմպերով, քան բանվորական շարժման զարգացումը:

Այդ համեմատաբար այնքան էլ վաղուց չէր: Յես տեսել եմ այն ժամանակը, յերբ աշխատանքը գործարանում սկսվում էր առավոտյան ժամի 6-ն անց 30 րոպեյին և վերջանում էր յերեկոյան ժամի 6-ին՝ ճաշի համար մեկ ու կես ժամ ընդմիջումով: Փարբիկաներում աշխատանքը սկսվում էր առավոտյան ժամի 5-ին և վերջանում էր յերեկոյան ժամի 8-ին՝ ճաշի և նախաճաշի համար 2 ժամ ընդմիջումով: Բանվորները մեծ մասամբ ապրում էին բարակի տիպի հանրակացարաններում:

Գործարանային կառավարչութիւնի կամայականութիւնի դեմ յեղած բողոքները շատ դեպքերում անկազմակերպ ընույթ էլին կրում և հաճախ արտահայտվում էին վարպետներին ծեծելով: Յերբեմն վարպետների դուռնիներին տուպրակ էլին հազցնում և ձեռնասայլակով գործարանի դարբասից դուրս տանում: Վարպետներին ծեծելուն մասնակցող մարդկանց բանվորները զնահատում էլին, վորպես գոյութիւն ունեցող ճնշման և վարպետի անձնական կամայականութիւնի դեմ քաջ բողոքողներին: Հասարակական դըլխավոր վայրերը, վորտեղ հավաքվում էին բանվորները, գարեջրատները, պանդոկներն էլին:

Բանվորի կյանքը ծայր աստիճան պրիմիտիվ էր. օւժաւասպառիչ յերկար աշխատանքային ուրը և բնակարանային վատ պայմաններն էլին ուսական բանվորի բաժինը: Բանվորները համարյա ամբողջ ազատ ժամանակը ստիպված էլին անցկացնել պանդոկներում, գարեջրատներում և թեյարաններում: Բանվորի աշխատավարձն այնքան ցածր էր, վոր հազիվ էր բավականացնում բանվորի ընտանիքի կիսամուրացիկ գոյութիւնը պահպանելու համար: Մոսկվայի Պրոխորովսկայա մանուֆակտուրայում, վորտեղ աշխատավարձն ամենից ավելի բարձր էր, այն միջին հաշվով համար էր ամսական 20 ռուբլի 50 կոպեկի: Այն ժամանակ համարյա ամեն մի ձեռնարկութիւնի մեջ կիրառվում էր

տուգանքների ծաղրող սիստեմը: Նույն Պրոխորովսկայա մանուֆակտուրայում բանվորներին տուգանում էլին՝

անկարգութիւնի համար՝ 50 կոպ.

առանց գրասենյակի գիտութիւնի իրեն մոտ վորեւէ մեկին գիշերելու թողնելու համար՝ 50 կոպ.

ներքեւի դարբասն անցնելու համար՝ 50 կոպ.

բակից բացակայելու համար՝ 50 կոպ.

ժամանակից շուտ վեր կենալու համար՝ 50 կոպ.:

Միքանի «աստվածապաշտ» գործարանատերեր տուգանում էլին բանվորներին նաև «յեկեղեցի չգնալու համար»:

Վարպետների վերաբերմունքը դեպի բանվորները համարյա նահապետական ընույթ էր կրում: Այս կամ այն վարպետի մոտ աշխատում էլին մի գյուղի բանվորներ: Կային ամբողջ արհեստանոցներ, վորտեղ աշխատում էլին մի գյուղի մարդիկ: Յերբ գյուղից նոր աշխատող էր գալիս, հայրենակիցները սեղավորում էլին նրան գործարանում կամ արհեստանոցում, հասկանալի յե, «սիրաչահելով» իրենց համագյուղացի վարպետին համապատասխան վարձատրութիւնը՝ նատուրայով կամ փողով: Վարպետը կաշառք էր վերցնում աշխատանքի ընդունել տալու համար, իսկ յերբեմն էլ բանվորներից փող էր ստանում նաև ավելի բարձրացված աշխատավարձի համար:

Կարելի յեր բազմաթիվ որինակներ բերել, թե ինչպիսի ստորացումներ պետք է կրեր բանվորը այս կամ այն ձեռնարկութիւնի մեջ ընդունվելիս: Կահամանափակվենք այդպիսի որինակներից միայն մեկով: Ահա թե ինչպես էր կատարվում բանվորների ընդունելութիւնը «Ռուս-ամերիկայան ռեստինի մանուֆակտուրայում» (այժմ «Կրասնի տրեուզլ-նիկ»):

«Հավաքագրումը կատարվում էր շարաթական յերկու անգամ—յերկուշաբթի և հինգշաբթի օրերը: Դիրեկտորը մայթի յերկարութիւնը կանգնեցնում էր մարդկանց և ման էր դալիս, ընտրում էր, ինչպես մասգործն անասուններին նախիրում, նրանց, վորոնք ավելի ամրակազմ էլին, բարձրահասակ էլին, խոնարհ և հարգալից էլին հարցերում, իսկ

դիրեկտորի հետևից—նրա թիկնապահ, ալադ նշող Ֆրանցը՝ «Դե» մականունով: Ֆրանցը գերմանացի յեր, ուսեբեն շատ վատ եր խոսում, և միայն բղավում եր. «Այտեղ յեկ գե՛, այնտեղ գնա, դե՛»: Գեյդեն տոմսակ եր ապիս, իսկ «Դեը» ուղարկում եր միջանցքը, վորտեղ վարպետները տեսակաւորում եյին կատարում»:

Բայց այն ժամանակ ել արդեն բանվորները մեջ սկսեցին յերեան գալ մարդիկ, վորոնք մտածում եյին բանվոր դասակարգի կյանքի բարելավման ուղիների մասին: Բանվորների պայքարը կապիտալիստների դեմ ընդունում եր ավելի ու ավելի կադմակերպված և համախմբված բնույթ: Բանվորների գործադուլներն ավելի ու ավելի հաճախ եյին զուգորդվում բանվորական շարժման ընդհանուր խնդիրների և նպատակների հետ: Կապիտալիստական իրավակարգի դեմ մղվող՝ բանվոր դասակարգի անհաշտ պայքարում ծնվեց, աճեց և ամրապնդվեց Լենինի—Ստալինի կուսակցութունը, կոմունիստական կուսակցութունը:

Բանվոր դասակարգը վերջին տասնամյակներում նախքան Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութունը, մի քիչ բարելավեց իր գրութունը—կրճատվեց աշխատանքային ուրը, ավելացավ աշխատավարձը, բանվոր դասակարգի վերնախավը հնարավորութուն ստացավ մի քիչ ավելի լավ ապրելու: Բայց սրա հետ միասին մեծացավ բանվորի նյութական դրության անկայունութունը: Կապիտալիզմի գարգացման հետ միասին ավելի հաճախակի դարձան կրիզիսները, վորոնց ժամանակ հարյուր—հարյուրավոր բանվորներ դուրս եյին շարտվում գործարաններից ու ֆաբրիկաներից, գործարանի դարբանների մոտ ավելի ու ավելի յեր մեծանում աշխատանքի պահեստի բանակը:

Ռուսական բանվորն ավելի ու ավելի յեր անապահով պրոլետար դառնում, վորն աշխատելով այսօր, բոլորովին համոզված չեք, թե վաղն ել կաշխատի. ստանալով վորոշ վարձատրութուն այսօր, նա բոլորովին համոզված չեք, վոր վաղն ել նույն վարձատրութունը կունենա:

Համեմատելով այժմյան Սոցիալդեպիյն Միության բանվորի կյանքը հին ցարական Ռուսաստանի բանվորի կյանքի ու

աշխատանքի հետ, մենք տեսնում ենք, թե ինչպիսի անդունդ կա նրանց միջև: Սոցիալիստական Մեծ հեղափոխութունը, վոչնչացնելով կապիտալիստների և կարվածատերերի տիրապետութունը, արմատապես փոխեց խորհրդային բանվորների կյանքի և աշխատանքի պայմանները: Յեւ կյանքի ամենակարեւոր բարելավումներից մեկը յես համարում եմ այն, վոր բանվորի գլխին այժմ կախված չե մշտնջենական դամոկլյան սուրը,—բանվորը յերկյուղ չունի, վոր վաղը նա անգործ կմնա: Մեր բանվորների յերիտասարդ և նույնիսկ միջին սերունդն այժմ չի կարող մինչև անգամ մտքով պատկերացնել աշխատանքը կորցնելուց առաջացող այն զգացումը, վոր պրոլետարն ունենում եր անցյալում: Նույնիսկ բարձրագույն կատեգորիայի բանվորները, վորոնք համեմատաբար ավելի եյին ապահովված վոչ միայն իրենց աշխատավարձի չափով, այլև նրա մշտակսնությամբ, նույնիսկ այդ բանվորներն ել յերբեք չեյին ազատվում այն մտքից, վոր ամեն րոպե հնարավոր ե, վոր կորցնեն իրենց աշխատանքը: Առանձնապես ուժեղ եր այդ զգացումը կրիզիսների և այսպես կոչված դեպրեսիաների ժամանակ:

Բանվորը, գործարանում աշխատելով, հասկանալի յե, բաղխվում ե տասնապետի, վարպետի, արհեստանոցի պետի հետ: Կապիտալիստական արտադրության պայմաններում վարպետի և բանվորի շահերը միշտ իրար հակադիր են: Վարպետն ուզում ե իրն ավելի եժան պատրաստել, քան այն իրոք արժե: Բանվորն ուզում ե ավելի ստանալ: Այդ հողի վրա միշտ տեղի եյին ունենում ընդհարումներ: Վորքան ել թեկուզ բանվորը ձգտեր իրեն համեստ պահել, չլղայնացնել վարպետին ու համապատասխան մեծավորին, այնուամենայնիվ սուրբյա աշխատանքներում նա չի կարող խուսափել այդ ընդհարումներից, իսկ յերբ վրա յե հասնում կրիզիսը կամ դեպրեսիան, բանվորը հիշում ե վարպետի հետ ունեցած այդ ընդհարման մասին և սպասում նրանից պատիժ ու հեռացում: Ամեն րոպե աշխատանքից հեռացված լինելու այդ գիտակցութունը մի պատուհաս եր բանվոր դասակարգի համար և ստիպում եր նրան շարունակ զգաստ լինել, միշտ հաշի առնել վարպետին, կշռադատել իր ամեն մի

գործողութիւնը: Այդպէս եր ցարական Ռուսաստանում, այդպէս և կապիտալիզմի տիրապետութեան յերկրնե-
րում: Բոլորովին այլ դրութիւնն է մեզ մոտ, Սորհրդային Միութեան մեջ, վերտեղ չկա մարդու շահագործում մարդու
կողմից, վերտեղ լիովին վոչնչացված է գործադրկութիւնը, վերտեղ բանվորն ու վարպետը հետապնդում են միևնույն նպատակը—վորքան կարելի յէ լավ ծառայել սոցիալիզմի գործին:

Այն գիտակցութիւնը, վոր յէս գործարանում մշտական բանվոր եմ, այն գիտակցութիւնը, վոր յէթե մի գործարանում այս կամ այն պատճառով աշխատանքը պակասի, ինձ կիտխաղրեն մի այլ գործարան, մշտականութեան գիտակցութիւնը, այն գիտակցութիւնը, վոր կոլեկտիվը կարիք ունի իմ աշխատանքին,—մարդուն ինքնուրույն և դարձնում, բարձրացնում և նրա կենսագործունեյութիւնը, հնարավորութիւնն է տալիս բանվորին միանգամայն հանդիստ կերպով իր ազատ ժամանակը նվիրելու հանգստի, գլխարձութիւններին, իր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, հասարակական—քաղաքական կազմակերպութիւններին աշխատանքներին:

«Բանվորն ու կուլտուրականը լիովին մտահոլութիւնն ստացան վաղվա որվա նկատմամբ, և իրենց գործադրած աշխատանքի քանակից ու վորակից և միայն կախված նրանց կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի ավելի ու ավելի բարձրացումը: ԽՍՀՄ աշխատավորի համար անհետացավ գործադրկութեան, աղքատութեան ու սովի սպառնալիքը: Վստահորեն ու բերկրալից և նայում ամեն մի բանվոր ու կուլտուրական իր ապագային, ավելի ու ավելի բարձր պահանջներ ներկայացնելով գիտութեանն ու կուլտուրային»¹:

Սոցիալիստական Մեծ հեղափոխութեան այս նվաճումն իր կնիքն է դնում ամբողջ բանվոր դասակարգի վրա, փոխում է նրա բնավորութիւնը, թերահավատ և վաղվա որվա նկատմամբ անվստահ մարդուց բանվորը դառնում է ակ-

¹ ՀամԿ(բ)Կ XVII համագումարի բանաձևերը, էջ 6, Կոնհրոտ, 1934 թ.:

տիվ լավատես: Այս կարելի յէ նկատել անթիվ—անհամար որինակներով:

Բայց մեր բանվորները լավատեսութիւնը վոչ մի առնչութիւն չունի աշպես կոչված «միջին ամերիկացու» լավատեսութեան հետ, վորն իր կենսական բոլոր պլանները կառուցում է բախտի վրա, անհավատալի դեպքի վրա, անսպասելի յերջանկութեան, բարենպաստ դասավորվող հանդամանքները վրա: Հարկավոր է արդոք ասել, վոր այս հույսերը մեծ մասամբ հանդիսանում են միայն դատարկ յերևակայութիւն, վորն անգթորեն վոչնչացնում են կապիտալիզմի պայմանները: Սորհրդային բանվորի լավատեսութիւնն ավելի քան հիմնավորված է, վորովհետև դա բղիտում է խորհրդային իրավակարգի բուն էյութիւնից, դա ծագում է այն բանից, վոր առանձին բանվորի բարոյութեան համար մեղնում շահագորդված է ամբողջ կոլեկտիվը, ամբողջ բանվոր դասակարգը: Այդ լավատեսութիւնն ամբողջում է ԽՍՀՄ Ստալինյան Սահմանադրութեամբ.—«ԽՍՀՄ քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, այսինքն՝ ապահովված աշխատանք ստանալու իրավունք, նրանց աշխատանքը վարձատրելով նրա քանակի ու վորակի համապատասխան»: Ի՞նչ լավատեսութիւն կարող են ունենալ կապիտալիստական յերկրների բանվորները, յէթե նվազեցրած պաշտոնական տվյալներով ԱՄՆ-ում—կապիտալիստական ամենաապահով յերկրում—ավելի քան տաս միլիոն մարդ կա գործազուրկ. Գերմանիայում գործազուրկների քանակը հաշվում է 3,5 միլիոն, Անգլիայում—2 միլիոն, Լեհաստանում—367 հազար:

Սոցիալիստական Մեծ հեղափոխութիւնը ոռս բանվորին բերեց աշխարհում ամենակարճ աշխատանքային ուրը—յոթ—ժամյա աշխատանքային ուրը: Այս հսկայական նվաճում է, վորի նշանակութիւնը դժվար է գերազնահատել: Արտադրութեան մեջ ընդամենը յոթ ժամ զբաղված լինելով, խորհրդային բանվորն իր տրամադրութեան տակ ունի 17 ժամ՝ քնելու, անձնական ու հասարակական կյանքի համար: Այս նշանակում է, վոր բանվորը բավականաչափ ժամանակ ունի իր քաղաքական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար. այս նշանակում է, վոր բանվորը կարող է

բաժնական ժամանակ նվիրել էր ընտանիքին. այս նշանակում է, վոր բանվորը բաժնականաչափ ժամանակ ունի հետեւելու էր յերեխաների կուլտուրական դարգացմանը:

Այս բոլորից զրկված էյին ցարական Ռուսաստանի բանվորները: Ձրկված են դրանից նաև ամբողջ կապիտալիստական աշխարհի բանվորները:

Ֆարական Ռուսաստանի բանվորները զաւակները, վորպես կանոն, հսկողութունից զուրկ էյին, իրենց ազատ ժամանակն անց էյին կացնում բանվորական թաղամասերի կեղտոտ հետնախորշերում, լրացնելով ջրեական հանցագործները շարքերը. իսկ ջիջ մեծանալուց հետո, դեռ դպրոցը չաւարտած, դեռ էյին գործարաններն ու Փարբիկաները վորպես աշակերտ աշխատելու: Ֆարական Ռուսաստանի բոլոր բանվորները մի յերրորդը սկսել է աշխատել գործարաններում և Փարբիկաներում՝ տասներկու տարեկան չդարձած (նրանցից 10% Փարբիկաներն է դնացել դեռևս 10 տարեկան էլ չդարձած). բանվորները մյուս յերրորդ մասը սկսել է աշխատել 12—14 տարեկան հասակում: Յեւ բանվորների միայն մի յերրորդը սկսել է աշխատել տասնհինգ տարեկան հասակից:

Այս ամենը հախտենականության դիրկն է անցել: Այժմ աշխատավորների զաւակները հնարավորություն ունեն կուլտուրայես սպասարկված լինելու: 1937: թվին իՍՍՀՄ միջնակարգ և տարրական դպրոցներում սովորում է մոտ 30 միլիոն յերեխա: իՍՍՀՄ քաղաքացին բոլորովին հանդիստ է իր յերեխաների ուսման վերաբերմամբ: Դրա համար կան ձրի դպրոցներ, ուր նա որենքով նույնիսկ պիտուաւոր է ուղարկել իր յերեխաներին: Ամեն մի յերեխայի հետագա ուղին ամբողջպպես կախված կլինի նրա ընդունակութուններից և հակումներից:

Այս մեզ մոտ դրամի չի վերածվում, այս պարզպպես չի հաւաքուվում բանվորի բյուջեյում, իսկ մինչդեռ այս պետական ծախսերի մեջ հսկայական հողված է: Բաւական է ասել, վոր հին Ռուսաստանում միջնակարգ դպրոցի ուսման վարձը համեմատաբար բարձր չէր, և այնուամենայնիւ մի յերեխայի ուսուցումն արժենում էր տարեկան 250 ռուբլուց

վոչ պակաս՝ վորակյալ բանվորի ամսական 40—45 ռուբլի միջին աշխատավարձի ժամանակ: Այստեղից հասկանաւի յե, թե ինչու միջնակարգ ուսումնական հաստատություններում բանվորների յերեխաներ համարյա թե չկային:

Սոցիալիստական հեղափոխության վոչ փոքր նվաճումներից մեկն է բանվորների ապահովագրումը հիւանդության, անաշխատունակության և ծերության դեպքերում: Ի՞նչ է նշանակում ձրի բժշկական ոգնություն: Յես վորակյալ բանվոր էյի, իմ վաստակը բանվորի միջին աշխատավարձից բարձր էր: Մի անգամ յես հիւանդացա գործարանում: Յերկու ամիս պառկած էյի հիւանդ և այդ ժամանակվա ընթացքում ապահովագրական գանձարկից ստացա ընդամենը 15 ռուբլի, մինչդեռ իմ ոտճիկից պահում էյին ապահովագրման 1½%: Ավելացրեք դրան բժշկի վարձը, դեղերի արժեքը, և ձեզ համար պարզ կլինի, թե ինչպիսի դրության մեջ ընկա յես, վորակյալ բանվորս: Հիւանդության 2 ամիսը, ինչպես առաջ ասում էյին, ինձ խտակ քամեցին:

Վերցնենք նյութական ապահովումը ծերության և աշխատունակությունը կորցնելու դեպքում: Քանի դեռ մարդ յերեխասարդ է, ուժեղ է, նա այդ հարցով չի հետաքրքրվում: Հին Ռուսաստանում այսպես էր լինում. —վորակյալ բանվորն ստանում էր համեմատաբար վոչ վատ աշխատավարձ: Բայց անա նա ծերացաւ: Ի՞նչ կարելի յեր անել: Յեթե նա գործարանում յերկար տարիներ էր աշխատել, յեթե նրան համարում էյին գործարանային վարչության հավատարիմ ծառա, ապա նրան վորակյալ աշխատանքից փոխադրում էյին կամ պահակի կամ արհեստանոցի հավաքաբարի պաշտոնի: Դրա համեմատ, իհարկէ, պակասում էր նաև նրա աշխատավարձը: Սակայն չէ՞ վոր այսպիսի դրության արժանանում էյին միմիայն «յերջանիկները», միայն նրանք, վորոնց հատուկ բարյացակամությամբ էր վերաբերվում վարչությունը: Իսկ ծերունիների մեծ մասն արձակվում էր աշխատանքից: Կապիտալիստի համար բացարձակպպես միևնույն է, թե ինչպես կապրի իր արձակած բանվորը, այն բանվորը, վորը 30—40 տարիների ընթացքում

հարստացնում էր իրեն: Հեռացված բանվորն իր ծերունի գոյությունը քարչ եր տալիս համ իր զավակների ոժանդակությամբ, յեթե նրանք փոքրիչատե ապահովված ելին լինում, համ թե ուղղակի մի կերպ գլուխը պահում եր և մինչև իսկ մուրացկանություն անում:

Այդպես եր վոչ միայն նախկին ցարական Ռուսաստանում, այդ տեղի յե ունենում նաև այժմ ամբողջ կապիտալիստական աշխարհում: Վորչափ ավելի զարգացած է կապիտալիզմը, այնքան ել ըստ տարիքի ավելի շուտ է դուրս չարտվում գործարանից բանվորը, վորպես շահագործման համար քիչ պետքական մի առարկա: Ահա ձեզ բանվորի կապիտալիստական «ապահովվածությունը» նրա ծերության ժամանակ:

Այլ դերություն է մեզ մոտ: Ամեն մի խորհրդային աղնիվ քաղաքացի որենքով ապահովվում է իրեն պատկանող կենսաթոշակով: Պարզ է, վոր այս փաստերից յեղնելով, կապիտալիստական աշխարհի և մեր մարդկանց հոգեբանությունը բոլորովին տարբեր են իրարից:

Ճիշտ է, մեզ մոտ ել կան «խելոքներ», վորոնք, համեմատելով մեր բանվորի բնակարանն ու սնունդը ամերիկացի բանվորի բնակարանի և սննդի հետ, ասում են, վոր ամերիկացի բանվորն ավելի միս է ուտում, ունի ավելի լավ բնակարան: Յես ընդունում եմ, վոր Ամերիկայի բանվոր դասակարգի ամենագործունյա մասը իր ուժերի ծաղկման շրջանում գուցե ավելի շատ շոկոլադ է ուտում, քան ուտ բանվորը: Բայց չե՞ վոր պետք է հաշվել վոչ միայն շոկոլադի կտորները, պետք է հաշվել և այն հսկայական նյութական-կուլտուրական սպասարկումը, վոր ունեն խորհրդային Միության աշխատավորները՝ հանդատի տներ, սանստորիումներ, մանկապարտեզներ և մանկամսուրներ, արձակուրդները հղիության պատճառով և այլն: Սրան պետք է ավելացնել հսկայական թվով թատրոնական-յերաժշտական կազմակերպությունները գործարաններում, ձրի համերգները, երակուրսիաները և այլն, և մենք կտեսնենք, վոր յեթե այս բոլորը գումարենք մի տեղ, ինչպիսի հսկայական տարբերություն կա ՈՍՀՄ բանվոր դասակարգի դերության մեջ՝

համեմատած վորեւ կապիտալիստական յերկրի բանվոր դասակարգի դերության հետ: Պատահական չե, վոր մեր բոլոր թատրոնները լեփ-լեցուն են լինում: Ի՞նչ է վկայում այդ: Այդ վկայում է խորհրդային պետության աշխատավորական մասսաների նյութական ունեւորության զգալի բարձրացման մասին, այդ վկայում է մասսաների կուլտուրական պահանջների բացառիկ աճման մասին: Այդ վկայում է այն մասին, վոր մեր աշխատավորական մասսաները դառնում են աշխարհի ամենակուլտուրական մասսաները:

Այս բոլորը Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակների արդյունքն է: Այս բոլորը բանվորներին տվեց խորհրդային իշխանությունը: Խորհրդային իշխանությունը բանվոր դասակարգին խորհրդային Միության ունեցած բոլոր հարստությունների տերը դարձրեց: Նյութական և կուլտուրական արժեքների զարգացման ամեն մի առաջադիմական քայլը դառնում է աշխատավոր մասսաների սեփականությունը: Վորքան ավելի յե զարգացած կապիտալիզմը, այնքան աղքատ, անապահով է դառնում բանվորը: Վորքան ավելի հզոր և հարուստ է դառնում մեր հայրենիքը, այնքան ավելի ունեւոր և կուլտուրական է դառնում աշխատավոր մասսաների կյանքը:

Ահա թե ինչ է ավել ժողովրդին խորհրդային իշխանությունը: Ահա թե ինչումն է խորհրդային իշխանության ուժը: Ահա թե ինչու բանվոր դասակարգը, լինելով ստեղծողը, կազմակերպիչը և գլխավոր մարտիկը, հանուն խորհրդային իշխանության, ամբողջ իր հզորությամբ ամուր պահում է և աչալուրջ պահպանում իր խորհրդային իշխանությունը:

ԿՈՒՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՎՏԱՐԻՄ ՇԵՆԱՐԱՆՆ Ե

Խորհրդային իշխանության համար մղած պայքարին, նրա ստեղծագործական ուժերի զարգացմանը բանվոր դասակարգի հետ միասին մասնակցություն է ցույց տվել և գյուղացիությունը: Խորհրդային իշխանության ամենավախերիմ թշնամիները հույս ունեյին, վոր Խորհրդային Միու-

թյան գյուղացիությունը, վորը բաղկացած է գլխավորապես մանր սեփականատերերից, չի գնա բանվոր դասակարգի հետևից, չի գնա կոմունիստական կուսակցության հետևից, վոր կուլեկտիվացման անցնելիս նա չի հաշտվի արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը կորցնելու հետ և կգնա խորհրդային իշխանության դեմ: Այս նոմերը չանցավ: Այժմ արդեն նույնիսկ յերեխայի համար ել պարզ է, վոր գյուղացիությունը կոմունիզմի պայքարի գործում գարձել է բանվոր դասակարգի ընկերակիցը:

Կապիտալիստները կոմունիզմից վախենում են, ինչպես սատանան խնկից, և իրենց յերկյուղը ուզում են տարածել աշխատավոր մասսաների, առանձնապես գյուղացիության վրա: Վո՞չ: Կոմունիզմը գաղբելի յե միայն կապիտալիստների համար, իսկ աշխատավոր մասսաների համար կոմունիզմը ջահ է, փարոս է, վորը ցույց է տալիս կապիտալիստական ստրկությունից նրանց դեպի ազատագրում տանող ուղին: Այս մասնավորապես ցույց տվեց և խորհրդային գյուղացիությունը, վորը հաստատապես և անդառնալիտորեն կանգնեց կոլտոսեսային կյանքի ուղու վրա:

Լենինը «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905—7 թվականների ուսական առաջին հեղափոխության ժամանակ» վերտառությամբ իր գրքում գրել է. «10 միլիոն գյուղացիական անտեսություններ ունեն 73 միլիոն գեսյատին հող, 28 հազար ագնվազարմ և փնթի լենդլորդերը՝ 62 միլիոն գեսյատին: Այս է հիմնական Փոնը այն դաշտի, վորի վրա ծավալվում է գյուղացիական պայքարը հողի համար»¹:

Շատ բան է տվել խորհրդային իշխանությունը գյուղացիությանը, վորը դարերով գրկված է յեղել, անգուսպ կերպով շահագործվել է, անվերջ կողոպտվել է ցարական ավագանների, կալվածատերերի և գյուղական կուլակ-ցեղերի ձեռքով: Գյուղացիական շատ գավակներ են վոչնչացել հողի համար մղվող զարավոր պայքարում: Բայց միայն խորհրդային իշխանության որով գյուղացիներն իրենց նախապին

հասան, ստանալով ավելի քան 150 միլիոն հեկտար նախկին կալվածատիրական, պետական և վանքապատկան հողեր: Այդ հողը կարելի յեղավ ստանալ միայն այն բանի հետևանքով, վոր բանվորներն ու գյուղացիները վոչնչացրին կալվածատերերի և կապիտալիստների իշխանությունը, ջախջախելով նրանց ռազմի դաշտերում:

Յեթե 150 միլիոն հեկտարի արժեքը վերածենք դրամի, ապա այդ կկազմի միլիարդներ՝ խլված կապիտալիստներից և կալվածատերերից, վորոնք իր ժամանակին կողոպտել են գյուղացիներին: Սակայն բանը միայն այդ դումարը չէ: Ի՞նչ է նշանակում՝ գյուղացիներն ստացել են ավելի քան 150 միլիոն հեկտար կալվածատիրական, պետական և վանքապատկան հողեր: Այդ նշանակում է, վոր գյուղացիներն իրենց վրայից թոթափել են կալվածատիրական շահագործման կապանքները, թոթափել են իրենց վրայից կալվածատերերի և կուլակների ամենորյա ճնշումը: Չե՞ վոր շնորհիվ այդ հողի կուլակները և կալվածատերերը գյուղացուն գրել էյին կյանքի անտանելի պայմանների մեջ: Ճնշման ձևերը, կուլակների և կալվածատերերի կողմից այդ հողերից ոգուտ քաղելը յեղել են անվերջ բազմազան: Կալվածատերերը լծակ ունի. այդ լծակից ոգտվում է գյուղի տավարը: Դրա դիմաց գյուղացիները պարտավոր էյին աշխատել կալվածատիրոջ համար: Այն հողամասը, վորի վրայով գյուղացիներն իրենց գաշտերն են քշում անասուններին, գտնվում է հենց կուլակի հողամասի վրա, — բարեհաճիր դրա համար վճարել կուլակին: Կալվածատիրոջ կամ կուլակի հողամասը հասնում է մինչև գյուղացիական խրճիթները: Պատահամբ այդ հողամասն է ընկնում գյուղացու հավը՝ բարեհաճիր նաև դրա համար վճարել:

«Գյուղացուն հասցրել էյին մուրացիկի կյանքի մակարդակին. նա սպրում էր անասունների հետ միասին, հագնում էր ցնցոտիներ, կերակրվում թելուկով: Գյուղացին փախչում էր իր հողաբաժնից, յեթե միայն փախչելու տեղ եր լինում, նույնիսկ փրկագնվելով իր հողաբաժնից, հողաբաժինը վերցնել համաձայնողին վճարելով այն մոծոմները, վորոնք գերազանցում էյին հողաբաժնի յեկամտից: Գյուղա-

6348
39

¹ Լենին, հատ. XI, էջ 337:



ցիները շարունակաբար սովաճար եյին լինում, տասնյակ-հազարներով մեռնում եյին սովից և համաճարակներից անբերբիւթ յան ժամանակ, վրը կրկնվում եր ավելի ու ավելի հաճախակի»¹:

Կալվաճատիրոջ տնտեսութեան մոտ լինելը գյուղական խրճիթներին՝ իսկական դժբախտութեան եր գյուղի համար: Վորքան ավելի մեծ եր լինում կալվաճատերերի թիւն այս կամ այն գավառում, այնքան ավելի սեղաններն եր լինում տեղական կառավարչութեանը: Ամենալավ որինակը կարող եր ծառայել Կուրսկի նահանգը: Այստեղ եր կալվաճատերերի ամենամեծ թիւը, առավել աղքատ, անգրագետ, ճնշված ուսու գյուղացիութեանը, հենց այստեղ եր ամենաուսուցիչներն ընդհանուրեց մեկը: Մոտավորապես նույնպիսի պատկեր եր ներկայացնում Ուկրաինան, վորտեղ խոշոր կալվաճատերերը տարեցտարի հազարավոր գյուղացիական ընտանիքներէ հարկադրում եյին տեղափոխվել Հեռավոր Արևելք և ուկրաինացի մյուս կողմը, Ամերիկա:

Շատ բան ե ավել խորհրդային իշխանութեանը գյուղացիութեանը, վորչնացնելով կալվաճատիրոջը և ցեց կուլակին:

Գյուղում կուլեկտիվացում անցկացնելով, խորհրդային իշխանութեանը լուծել և սոցիալիստական հեղափոխութեան ամենաբարձր խնդիրներից մեկը: Կուլեկտիվացման պրոցեսը շատ դժվար եր: Այդ միանգամայն բնական ե: Մարդիկ դարերով ընտելացել եյին վորոչ կենցաղավարութեան, իսկ կոմունիստական կուսակցութեանը և խորհրդային իշխանութեանը կանչում եյին նրան դեպի «անհայտը», կուլեկտիվացում եյին մտցնում: Մեզ համար հստակնալի եյին գյուղացիական մասսաների յերկյուղը, նրանց ծանր մտածմունքները...

Կուլեկտիվացում մտցնելուն հակառակում եյին բոլոր հակախորհրդային տարրերը, ժողովրդի բոլոր թշնամիները, բոլոր նրանք, ովքեր դեթ փոքր հույս ունեյին հին կապիտալիստական իրավադրի վերադարձի նկատմամբ: Նրանք քիչ բան չարին կուլեկտիվացման գործի վիժեցման համար:

¹ Լենին, Հատոր IV, էջ 101:

Այնուամենայնիվ հաղթանակեց առողջ դատողութեանը, չքափոր և միջակ գյուղացիութեան հավատարմութեանը բանվոր դասակարգին: Տեղի ունեցով չքափոր-միջակ մասսաների արմատական շրջադարձը դեպի կոլտնտեսային շինարարութեան կողմը: Կուլեկտիվացումը փայլուն կերպով անցկացվեց: Կուլակութեանը—կապիտալիստական վերջին դասակարգը—վերջնականապես ջախջախվեց: «Մակ լինչ և նշանակում այդ: Այդ նշանակում ե, վոր առնվազն քսան միլիոն գյուղացի բնակչութեան, առնվազն քսան միլիոն չքավորներէ մենք փրկեցինք աղքատութեանից ու ավերումից, փրկեցինք կուլակային ստրկութեանից և կոլտնտեսութեանների շտրհիվ դարձրինք ապահովված մարդիկ»¹:

Ի՞նչ բան և կուլեկտիվացումը: Վորո՞նք են նրա առավելութեաններն անհատական գյուղացիական տնտեսութեան հանդեպ: Յես կարծում եմ, վոր այժմ ամեն մի կոլտնտեսական ավելի համողեցուցիչ կերպով, քան յես, կարող ե ապացուցել այդ առավելութեանները: Յես միայն կհիշեցնեմ բոլորին հայտնի ճշմարտութեանը՝ կուլեկտիվացումը հնարավորութեան ավելի կուլտուրական դարձնելու գյուղի խամուս, վատ մշակվող, խոպան հողերը: Այս մեծ նվաճում ե: Այս հաղթութեան պատվները մենք քաղում ենք այս տարի: Նախնական հաշվումներով մենք այժմ ունենք մոտ 7 միլիարդ փութ հաց: Կարծում եմ, ամեն մի խելամիտ կոլտնտեսական մատիտը ձեռքին կարող ե հաշվել, վոր հողի անհատական յեղանակով մշակելու ժամանակ ամենամեծ բերքի տարիներին մենք չեյինք կարող ստանալ այսպիսի բերք: Այս ել հենց բնական ե: Չպետք ե մոռանալ, թե ինչ և նշանակում հողի անհատական յեղանակով մշակում: Այդ նշանակում ե, վոր ամեն մի գյուղացի ամեն մի դաշտում ունի մի քանի հողաշերտ: Մեկը հողը լավ ե մշակում, մյուսը՝ վատ. մեկի ձին լավն և, մյուսինը՝ անպետք: Եր գյուղացիները շատ լավ են հիշում, թե ինչպես նրանք իրարից հող եյին դողանում: Զուր չե, վոր ժողովուրդը այդ հավերժացրել և առածով՝ «Միջնակի՞ ու սահմանը կուլի են

¹ Մտային, Լենինիզմի հարցերը, էջ 659, 10-րդ հրատ., Հայկուս-հրատ, 1935 թ.:

ու նախատինք» («Межи да грани—ссоры да брани»): Նա, ով առաջինն եր հերկում, հարևանի հողամասից մի շերտ պոկում ու դցում եր իր հողամասի վրա, վորից միշտ տուժում եյին չքավորները:

Կոլեկտիվացումը վոչնչացրեց հողաշերտերի միջև յեղած ակոսները, վոչնչացրեց միջնակները, վորոնք դրավում եյին ամբողջ հողի մոտավորապես 3-ից—5%-ը, մուլախոտերի մշտական բուծարան եյին հանդիսանում: Այնուհետև, մի գյուղացի ցանում ե մի տեսակ հաց, մյուսը՝ այլ տեսակ. մի գյուղացու սերմերը տեսակավոր են, մյուսինը՝ աղտոտ. մեկի հացն արդեն հավաքվում ե, մյուսինը դեռ բոլորովին կանաչ ե. մեկը վարսակ ե ցանում, մյուսը, կողքին՝ կարտոֆիլ: Գյուղական տնտեսութեան մեջ յեղած այս խառնաչիտութեւնը, վորն անհնար եր վերացնել անհատական, մանր տնտեսութեան որով, գյուղական դաշտերը դարձնում եր անխնամ և սակավ բերքատու:

Կոլեկտիվացումն ստեղծեց բոլոր անհրաժեշտ պայմանները գյուղական տնտեսութեան մեջ տեխնիկական հեղափոխութեան կատարելու համար: Մի՞թե կարելի յեր տրակտորը բանցնել գյուղացիական նեղ հողամասերի վրա: Մի՞թե կարելի յեր այդ հողամասերի բերքահավաքին գեթ վորեւէ չափով գործադրել, որինակ, կոմբայնը: Ընդհանրապես ասած, գյուղացիական անհատական տնտեսութեանը համարանական արգելակ եր գյուղատնտեսութեան մեջ մեքենային մշակում մտցնելու գործում: Միայն կոլեկտիվացումը հնարավորութեան տվեց հողը կուլտուրապես մշակելու, ոգտագործելով գիտութեան և տեխնիկայի բոլոր նվաճումները: Կոլտնտեսային և խորհրդատնտեսային դաշտերը միմիայն 1937 թ. կատանան մեկ միլիարդ 200 միլիոն ո. գյուղատնտեսական մեքենաներ, իսկ 1936 թ. գյուղատնտեսական մեքենաչինարարութեան ամբողջ արտադրանքի արժեքը, տրակտորաչինարարութեան հետ միասին, հավասար եր 2 միլիարդ 260 միլիոն ռուբլու:

Կոլեկտիվացման հաղթանակը պատմական հաղթանակ ե: Ի՞նչ ե տալիս նա ժողովրդին: Նա գյուղացիներին ազատում ե մի շարք բացառիկ ծանր ֆիզիկական աշխատանք-

ներից: Բախական ե հիշել արորով, կամ այսպես կոչված Ռյադանի դուժանով հերկելը, կալսումը, հունձը—աշխատանքներ, վորոնք գյուղացիական հսկայական աշխատանք եյին կլանում, տալով վերին աստիճանի ցած արտադրողականութեան: Իսկ այսօր մեր դաշտերում աշխատում են 450 հազար տրակտոր և 121 հազար կոմբայն: Գյուղացիական անհատական աշխատանքը հսկայական ժամանակ եր խլում գյուղացուց: Նրա տնային առորյա աշխատանքները հնարավորութեան չեյին տալիս գյուղացուն գեթ մի բույս մտածելու իր դրութեան մասին՝ վորպես պետութեան քաղաքացու, մտածելու իր քաղաքական և կուլտուրական մակարդակի բարձրացման մասին: Անհատական աշխատանքը փոքրիկ հողամասի վրա, վաղվա որվա նկատմամբ շարունակ անխտաս լինելը՝ նեղացնում եյին գյուղացու մտահորիզոնը, սահմանափակում եյին նրա մտավոր շահագրգռութեանը, բթացնում եյին նրան: Յեղ գյուղացու այս խղճուկ սեփականութեանն, ուզում եր ոգտագործել հակահեղափոխութեանը:

Խորհրդային իշխանութեանն անեցրել ե անվանի կոմբայնավար Կոնստանտին Բորինին, վորն իր կոմբայնով հավաքել ե 2 հազար հեկտար հասկավոր կուլտուրաներ: Այդ նշանակում ե, վոր Բորինի կոմբայնի բունկերով անցել ե ամենաքիչը 180 հազար փութ հացահատիկ: Յեթե յենթադրենք, վոր Բորինի ազրեգատը յուրաքանչյուր որ հավաքել ե 75 հեկտար, ապա դուրս կգա, վոր մի ազրեգատով Բորինը որական փոխարինել ե 950 մարդու, 150 ձիու, 37 քամհարի և 20 ձիու կալիչների: Սա այն դեպքում, յեթե վոր 75 հեկտարի բերքահավաքը կատարվեր ձեռքով, իսկ կալսումը—ձիու կալիչներով:

Խորհրդային իշխանութեանն անեցրել ե Պետրովին (կլյուչեակի ՄՏԿ), վորը որական հավաքում ե 23 հեկտար վոչ: Վուչի այս ամբողջ քանակը ձեռքով չուփելու համար հարկավոր եր գործադրել 230 մարդու ծանր աշխատանք:

Կոլեկտիվացումը գյուղատնտեսութեան մեջ մտցրեց առաջավոր տեխնիկա: Կոլեկտիվացումը ամեն մի գյուղացուց պահանջեց ավելի մեծ կազմակերպվածութեան և իր աշխատանքի զուգորդումը համագյուղացիների աշխատանքի

հետ: Կոլեկտիվացումը նպաստում է գյուղում խորհրդային
ինտելիգենցիա ստեղծելուն: Նա առաջ քաշեց գյուղում կոմ-
բայնավարներ, արհատորիտներ, մեխանիկներ, խրճիթ-
լարորատորիաների լարորաններ, կոլտնտեսութան նախա-
գահներ, բրդագործներ, գրասենեկային աշխատողներ:
Գյուղացին առաջ իրեն անվանում էր հողագործ: Այդ ճիշտ
էր: Նա իր քոսոտ ձիու հետ միասին քչիորում էր հողը: Իսկ
ա՞յժմ: Ահա մի որինակ. Խորհուրդների Համամիութենական
Արտակարգ VIII համագումարի դեպուտատների թվում
13%-ը արհատորիտներ էին, 8%-ը—կոմբայնավարներ,
26%-ը կոլտնտեսությունների նախագահներ, 10%-ը բրի-
գադերներ, 20%-ը—ողակավարներ, 6%-ը—անասնաբուժա-
կան Ֆերմաների վարիչներ, 12%-ը—կով կիթողներ, հոր-
թապահ և խոզ պահող կանայք, 2%-ը—հովիվներ, 3%-ը—
թեյ, բամբակ և ուրիշ տեխնիկական կուլտուրաներ հավա-
քողներ: Մի՞թե սա ցուցանիչ չէ այն բանի, վոր «խորհրդ-
ային գյուղացիությունը միանգամայն նոր գյուղացիու-
թյուն է, վորի նմանը դեռ չի իմացել մարդկություն պատ-
մությունը»¹:

Շնորհիվ կոլեկտիվացման գյուղական կյանքը արագորեն
սկսեց նմանվել քաղաքի բնակչի կյանքին, գյուղացու մտա-
հորիցնը ընդլայնվեց: Վիթխարի չափով աճեց գյուղի ամ-
բողջ կուլտուրան: Առաջներում գյուղացուն անասնի դժվար
էր հասնել մարդկային գիտելիքների բարձունքներին: Միակ
ուղին— դա չարչիություն ուղին էր, վորով միլիոնավոր
գյուղացիներից միայն հառ ու կենտ մարդիկ էին կարո-
ղանում վաճառական դառնալ գոփոփություն և ամեն տեսակ
խարդախությունների միջոցով: Միջակ գյուղացին միայն
յերազեղ կարող էր վոչ միայն միջնակարգ դպրոցի, այլև
ընդհանրապես դպրոցի մասին: Այժմ գյուղը համարյա հա-
վասարվել է քաղաքին—նա ունի վոչ միայն տարրական,
այլև միջնակարգ կրթության դպրոցների բավականին խիտ
ցանց: Մեքենայացված արտադրությունը գյուղում ինքնին
նպաստում է նախաձեռնությունների գարգացմանը, գյուղացիներ-

ըի զավակների ինքնավստահությունը գիտություն, տեխնի-
կայի և արվեստի մեջ: Կարմիր բանակի հրամանատարական
կազմում, խորհրդային որդաններում, ձեռնարկություննե-
րի ղեկավարման, գյուղատնտեսությունից ղեկավարման դոր-
ծում գյուղացիները և դեղջիկուհիները պատվավոր տեղ են
գրավում:

Հեշտ ճանապարհ չի անցել գյուղացիությունն այս քսան
տարվա ընթացքում: Մանր սեփականատիրությունից գյու-
ղացին դարձել է կուլտուրական, ունեւոր կյանք ստեղծող
կոլեկտիվիստ: Կոլտնտեսությունները գյուղացուն հնարա-
վորություն տվին խորհրդային հսկայական դաշտերի իրա-
կան տերը դառնալու, հնարավորություն տվին ստեղծելու
այդ դաշտերում այնպիսի արժեքներ, վոր վոչ միայն չքա-
վորը, այլև նախկին կարվածատերն էլ յերազում չէր տե-
սել: Գյուղացին դարձավ իսկական տերը, իր սեփական յեր-
ջանկությունը ստեղծագործողը: Այս բոլորը տվել է խոր-
հրդային իշխանությունը:

Կոլտնտեսական գյուղացիները հանդիսանում են իրենց
հայրենիքի հավատարիմ զավակները, խորհրդային իշխա-
նությունից ամուր հենարանը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ

Դեռ 1894 թվին Լենինը գրել է այն մասին, վոր ինտե-
լիգենցիայի կազմը բնորոշվում է հետևյալ ձևով.—յեթե
հասարակության մեջ «թագավորում և ղեկավարում է կա-
պիտալիստը», ապա ինտելիգենցիայի մեջ «տոն է տալիս
կարյերիստների և բուրժուազիայի վարձկանների ավելի ու
ավելի աճող ամբոխը...»²:

Ինտելիգենցիայի վերին խավերը—խոշոր չինովնիկները,
քժիչիները, իրավաբանները—իրենց արժատներով սերտորեն
կապված էին խոշոր կապիտալիստական և կարվածատիրա-
կան տարրերի հետ: Այդ ինտելիգենցիայի մասին Լենինը
կարճառոտ ասում է՝ նա «միտում է միայն նրան, ով իրեն
կկերակրի»²: Ո՞վ կարող էր նրան կերակրել: Ո՞ւմ մաս էր

¹ Ի. Վ. Ստալին, ԽՍՀ Միությունից Սահմանադրության նախագծի
մասին, էջ 16, Հայկուհրատ, 1936 թ.:

¹ Լենին, հ. I, էջ 262, Պետհրատ, 1930 թ.:

² Նույն հատորում, էջ 197:

նա ծառայութեան մտնում: Միանգամայն հասկանալի յե-
վոր տիրող հարուստ դասակարգի մոտ, նրանց պետք է նա
ծառայել—«վերովհետև նրա համար այլ յեղբ չկար»¹:

Մեր հին ինտելիգենցիան կարծում էր, վոր ինքը կանգ-
նած է դասակարգերից վեր և արտահայտում է ժողովրդի
չահերը ամբողջութեամբ վերցրած: Այդ մասին առաջ շատ
էր գրվում: Իսկ ըստ եյության նույնիսկ նրա ամենագեմո-
կրատիկ մասն արտահայտում և պաշտպանում էր իր բնակ-
չութեան մանր-բուրժուական խավերի շահերը: Հասկանա-
լի յե, գրանով յես չեմ ուզում սոսել, վոր ինտելիգենցիան
իր միջից չի տվել ժողովրդական գործի համար մարտիկ-
ներ:

Մինչհեղափոխական ինտելիգենցիայի հիմնական մասը
համակված էր բուրժուական աշխարհայացքով: Հիշեցե՛ք
նախկին ինտելիգենցիայի կազմը: Ֆելդշերներ պատահում
էին յերբեմն և հասարակ գյուղացիներից կամ բանվորնե-
րից, բայց իրենց Ֆելդշերական կրթությունը նրանք ստա-
նում էին գնդերում: Գյուղերում նրանց ծաղրանքով ան-
վանում էին «ձիու Ֆելդշերներ», «ձիարուժներ»․ մանկա-
բարձուհիներն արդեն մանր-բուրժուական միջավայրից,
առավելապես կուլակային ընտանիքներից յեղանք էին:
Ուսուցիչներն իրենց մասսայով առած քահանաների, կու-
լակների, մանր չինովնիկների և այլոց զավակներ էին:
Շատ հազվադեպ էին պատահում ուսուցիչներ միջակ գյու-
ղացու ընտանիքից, ել չեմ խոսում չքավոր ընտանիքի մա-
սին:

Ինտելիգենցիայի այս դեմոկրատիկ մասն իր գրու-
թյամբ ամենից ավելի յեր կապված գյուղի ունևոր վերնա-
խավի հետ: Այդ կարելի յե յեղրակացնել թեկուզ հետևյալ
պարզ փաստից․ ամեն մի յեկեղեցական տոնին՝ գյուղի
ուսուցիչը, Ֆելդշերը, դարբին-տնտեսատերը, ջաղացպանը
և մյուսները հավաքվում էին, վորպես կանոն, հարուստ
գյուղացիների մոտ:

Ամբողջութեամբ վերցրած ինտելիգենցիան շատ հեռու

յեր ժողովրդից: Նույնիսկ 70-ական թվականներին նարողո-
վողեցնների վրա, վորոնք «գնում էին ժողովրդի մեջ», ժո-
ղովուրդը նայում էր ինչպես «սպիտակ վոսկրի» ներկայա-
ցուցիչների վրա, հավատ չէր ընծայում նրանց՝ ինչպես տի-
րող դասակարգի միջից յեղանների և առանձին դեպքերում
նրանց հանձնում էր իշխանություններին:

Ռուս ինտելիգենցիայի, առանձնապես նրա դեմոկրատիկ
մասի գրությունը, ել չեմ խոսում հին ցարական Ռուսաստա-
նի մյուս ժողովուրդների ինտելիգենցիայի մասին, վորդեր-
գական էր: Յարական իշխանութեան որդաններում և կալ-
վածատիրական սեպեցիոն գեմատվոյում լինելով ստորագաս
պաշտոններում, դեմոկրատական ինտելիգենցիան, տեսնե-
լով ժողովրդի հսկայական դժբախտությունները, չէր կա-
րող եյականորեն ոգնել նրան, և մանավանդ վոր իսկական
յեղբը չէր իմանում: Նա չէր տեսնում այն դասակարգը,
բանվոր դասակարգը, վորը գլխավորեր պայքարը ցարական
ինքնակալութեան և ամբողջութեամբ, առած կապիտալիզմի
դեմ: Ռուս դեմոկրատ ինտելիգենտի այդ վորդերգությու-
նը պայծառ շիթի պես անցնում է ամբողջ ուսական գրա-
կանութեան միջոցով:

Առավել առաջավոր, հեղափոխականորեն տրամադրված
ինտելիգենցիան անցնում էր ժողովրդի կողմը, իսկ բանվոր
դասակարգի հեղափոխական, շարժման հետագա զարգացու-
մը նրա լավագույն գավակներին գրավեց մարտնչող պրոլե-
տարիատի շարքերի մեջ, վորը գիտական սոցիալիզմի գաղա-
փարների միակ հետևողական մարտիկն է:

Ինտելիգենցիայի զգալի մասի նվիրված լինելը բուր-
ժուական կապիտալիստական իրավակարգին՝ սուր կերպով
յերևան յեկավ, յերբ բոլշևիկները գրավեցին իշխանությու-
նը: Ինտելիգենցիան լցվում էր եսերների, մենշևիկների և
այլ ավանտյուրական-քաղաքական խմբերի մեջ, վորոնք
գնեքը ձեռքին կովում էին խորհրդային իշխանութեան դեմ:
Ինտելիգենցիայի զգալի, յեթե վոչ մեծ մասը, սարտատժով
գեմավորեց խորհրդային իշխանութեանը:

«Առանց մեղ չեն կարող յուլա գնալ»,—մտածում էին
կապիտալիստներին և կապիտալիստական պետութեանը ծա-

1 Ի. Վ. Ստալին, ԽՍՀ Միութեան Սահմանադրութեան նախադժի-
մասին, էջ 10, Հայկուհրատ, 1936 թ.:

ապելու սովոր ինտելիգենտները: Սակայն այդ դատարկ
յերևակայությունն էր: Հոկտեմբերյան հեղափոխության
առաջին տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստում Աե-
նինը հայտարարեց. «Բանվոր դասակարգը ազդեցուցեց,
վոր ինքը կարողանում է առանց ինտելիգենցիայի և առանց
կապիտալիստների արդյունաբերություն կազմակերպել»¹:

Պրոլետարիատի կողմից իշխանությունը զբաղվելու ժա-
մանակվանից անցել է քսան տարի: Հին ինտելիգենցիան
այժմ, իր ճնշող մեծամասնությամբ կանգնած լինելով խոր-
հրդային իշխանության դիրքերի վրա, ազնվորեն, ամբողջ
ժողովրդի հետ միասին մասնակցում է սոցիալիստական շի-
նարարությանը: Նրա կողքին աշխատում են բանվոր դասա-
կարգի և գյուղացիության ընդերքից դուրս յեկած, խոր-
հրդային իրավակարգի պայմաններում ձևավորված, տաս-
նյակ և հարյուր-հազարավոր յերիտասարդ մասնագետներ:
Այս նոր խորհրդային ինտելիգենցիան որդանապես, սեր-
տորեն և անմիջականորեն կապված է ժողովրդի հետ:

Բանվորների և կոլտնտեսականների դավախները, ավար-
տելով տարրական դպրոցը, վոչ միայն իրավունք, այլ և
գործնական հնարավորություն ունեն ուսումը շարունակելու
միջնակարգ, այնուհետև և բարձրագույն դպրոցում, վոր-
տեղ ուսանողների վոչ միայն ուսուցման, այլև պահելու
ծախսը լիովին վերցված է պետության հաշվին: Մեր յերկ-
րում ամեն մի յերիտասարդ կարող է ընդունվել բուհ, ան-
կախ սոցիալական ծագումից: Միջնակարգ դպրոցը «գերա-
զանց» ավարտողները բարձրագույն ուսումնական հաստա-
տություններում ընդունվում են առանց կոնկուրսային քըն-
նությունների:

Մեր ինտելիգենցիան կարիք չունի սարքովի «ժողովրդի
մեջ գնալու», քանի վոր նա ինքը ժողովրդի որդանական
մասն է հանդիսանում, ապրում է ժողովրդի շահերով և
ձգտումներով: Մեր ուսանողը ժողովրդի մեջ չի գնում, այլ
արձակուրդներին գնում է իր ծննդավայրը, իր հարազատ
միջավայրը: 1937 թվի ամառը Սարկովի մարզի Նովոսեն-
ժարսկու շրջանի Մալայա Պերեչչեպլինա գյուղում հանդըս-

տանում է յին մոտ 50 ուսանողներ—այդ գյուղի կոլտնտեսա-
կանների տղաներն ու աղջիկները: Հենց միայն այդ փաստը
միանգամայն բավական է հասկանալու համար, թե կուլ-
տուրական ինչպիսի խոր փոփոխություններ են կատարվել
մեր ժողովրդի կյանքում, վորը իր միջկց առաջ է քաշում
իր ինտելիգենցիան:

Համարձակ կարելի յէ ասել, վոր մեր ինտելիգենցիան
գտնվում է բացառիկ յերջանիկ պայմաններում: Ամենասերտ
կապերով կապված լինելով ժողովրդի հետ, ինտելիգենցիան
ժողովրդի հետ միասին մասնակցում է սոցիալիզմի շինա-
բարության, կոմունիզմի դադափարները կյանքում կերտուե-
լու գործին: Խորհրդային մասնագետը սոցիալիստական շի-
նարարությանը մասնակցում է վոչ միայն վորպես շարքա-
յին մարտիկ, այլ և վորպես կազմակերպիչ, ղեկավար: Խոր-
հրդային ինտելիգենցիայի ստեղծագործական գործունեյու-
թյունը յենթարկված չէ, ինչպես բուրժուական յերկրնե-
րում, կապիտալիստների շահամոլությանը: Մեզ մոտ, Խոր-
հրդային յերկրում, նա ամբողջպես ծառայում է ժողո-
վրդի շահերին: Մեր ինտելիգենցիան չզիտե գործագրկու-
թյուն, մեզ մոտ չկա ինտելիգենտային աշխատանքի մարդ-
կանց ավելցուկ, ինչպես այդ գոյություն ունի կապիտալիս-
տական բոլոր յերկրներում: Ընդհակառակը, մեր պետու-
թյունը ձգտում է բոլոր բանվորներին հասցնել ինժեներ-
տեխնիկական աշխատողների մակարդակին:

Այդպես է ինտելիգենցիայի—գիտության, տեխնիկայի
և գեղարվեստի մարդկանց դրությունը: Միմիայն խորհրդա-
յին իշխանության որով ինտելիգենցիան հնարավորություն
ստացավ լիովին դարգացնելու իր ընդունակությունները և
անսահմանորեն ծառայելու ժողովրդին:

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՅԵՐԿԻՐ Ե

Ռուսական կայսրությունը տարածված էր բազմաթիվ
ազգություններից բաղկացած՝ բազմամիլիոն ազգաբնակու-
թյուն ունեցող հսկայական տերիտորիայի վրա: Հարյուրա-
վոր տարիների ընթացքում ցարիզմն անընդհատ իրեն էր
միացնում մերձակա հողերը, նվաճված ժողովուրդներին

¹ Լեճիս, հ. XXIII, էջ 243:

Հպատակեցնելով իր տիրապետութեանը: Այս ժողովուրդներին-
րի նվաճումը դաժան բնույթ եր կրում: Գյուղացիական լա-
վազույն հողերն առաջին հերթին հափշտակում էին ցարա-
կան սատրապներն, իսկ նրանց հետևից զալիս էին ոռւս
կապիտալիստները, մանր փերեզակները, վերազնորդները,
ամեն տեսակի շահագործողները, վորոնց առաջին միտքն
էր՝ կողոպտել դաղութները:

Ահա ոռուսական կոլոնիզատորների «գործունեութեան»
բազմաթիւ պատկերներից մեկը:

Յարական մինխատր Կուրոպատկինի 1904 թվին Հեռա-
վոր Արևելք գնալու ժամանակ բուրյատ-մոնղոլները դելե-
դացիան գանդատ ներկայացրեց նրան տեղական իշ-
խանությունների կամայականութեան դեմ: Ի պատասխան
այդ գանդատի, Կուրոպատկինը դելեգացիային հայտա-
բարեց հետևյալը. «Նկատի ունեցե՛ք, վոր յեթե ձեր ժողո-
վուրդն իրեն վատ պահի, պատասխանատուն դուք եք, իսկ
յեթե, աստված մի արասցե, ձեր ժողովուրդը հանկարծ
մտածի վորևէ ազատ վարմունք թույլ տալ իրեն, հակառա-
կել թագավորի հրամաններին, դիտցե՛ք, վոր դուք բուրյա-
պես կ'ընջվեք յերկրի յերեսից: Ձեր հետքն անդամ չի մ'նա:
Ահա տեսե՛ք, այստեղ ինչքան ոռուսական զորք կա, իսկ բե-
րել տալ կարելի չէ հարյուր հազարներ, և դուք մի ակըն-
թարթում կ'ըմբիք ու կ'վռչնչանաք: Դուք վռչինչ չպետք է
պահանջեք: Դուք կարող եք վորոքմություն խնդրել
միայն»:

Յարիզմը դաժանորեն ճնշում էր ոռուս ժողովուրդին, ավե-
լի մեծ դաժանութեամբ հարձակվում էր նա վոչ-ոռուս բնակ-
չութեան աշխատավորների վրա: Իզուր չէր, վոր ցարական
Ռուսաստանը «ժողովուրդների բանտ» էին անխանում: Յա-
րիզմը համաձայնութեան մեջ էր մտնում կեղեքված ժողո-
վուրդները տիրող դասակարգի՝ եմիրների, խանների, բեկե-
րի, տեղական խոշոր կապիտալիստների հետ, մոտեցնում էր
այդ վերնախավը ցարական դահին և ամբողջ ծանրութեամբ,
ոռուս և տեղական ազգային բուրժուազիայի ու կրոնական
պաշտամունքի սպասավորների դրամական պարկերի ուժով
ճնշում էր ազգային գյուղացիութեանը: Խավարն ու տղի-

տությունը զաղախների, թուրքմենների, ուզբեկների, թուր-
քերի, չուվաշների և մյուս ժողովուրդների մշտական ուղե-
կիցներն էին: Իրավազրկությունը, անհույս աղքատու-
թյունը, նորանոր բռնությունների մշտական սպառնալիքը,
ազգությունների միջև կեղեքիչների կողմից արհեստական
կերպով հրահրված յերկպառակությունները, պաշտամունքի
սպասավորների բացարձակ հեղինակությունը—ազգային
փոքրամասնությունների կյանքը դարձրել էին իրոք ար-
ցունքի հովիտ:

Հասկանալի չէ, ազգային փոքրամասնությունների մեջ
այս ամենն առաջացնում էր սարսափելի ատելություն դե-
պի ցարիզմը, դեպի նրա չինովնիկները, իսկ նրանց պատ-
ճառով և դեպի ամբողջ ոռուս ժողովուրդը: Թվում էր, վոր
յերբեք չի դա այնպիսի ժամանակ, յերբ այդ ժողովուրդնե-
րը յեղբայրական սերտ կապերով կապվեն ու ապրեն ոռուս
ժողովուրդի հետ: Իսկ ցարական կառավարությունը, ոռուս և
վոչ-ոռուս կալվածատերերն ու կապիտալիստները, վաճառա-
կաններն ու առևտրականները, գեներալները, չինովնիկներն
ու տերտերներն ամեն ինչ անում էին, վորպեսզի հրահրեն
ինչպես ատելություն դեպի ոռուսականը, նույնպես ատելու-
թյուն և անբարյացակամություն բոլոր ազգությունների
միջև: Բոլորին հայտնի չէ այն մշտական թշնամությունը
թուրք և հայ ազգաբնակչությունների միջև, վորը պատճառ
էր դառնում ջարդերի և տասնյակ-հազարավոր մարդկանց
բնաջնջման:

Յարիզմն ու տիրող դասակարգերը ժողովուրդները մի-
ջև թշնամություն հրահրելով, նրանց միմյանցից խորթաց-
նելով աշխատում էին ամբացնել իրենց հիմքերը:

Ճնշված փոքրամասնությունների շարքերում վաղուց ի
վեր հասունանում էին տենչեր և հույսեր իրենց ազատու-
թյան համար: Քիչ չէին բողոքները, ապստամբություննե-
րը ներքին և արտաքին. վրացական, ուկրաինական, հրեա-
կան, հայկական, բելոռուսական, բուրյատ-մոնղոլական,
յակուտական և Ռուսաստանի այլ ժողովուրդների հեղա-
փոխական շատ մարտիկներ իրենց կյանքը դոհեցին ազատ և
յերջանիկ կյանքի համար մղած պայքարում: Բայց ազգային

ծայրերկրներին ժողովրդական մասսաների բոլոր ազատամբուժյունները, բողոքները դաժանորեն ճնշվում էին ցարական սատրապների կողմից:

«Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիներն իրենցից թոթափեցին ցարիզմի դահիճներին և կապիտալի ճնշումը չնորհիվ այն բանի, վոր հասկացան իրենց ազատագրական խնդիրը և Ռուսաստանի մյուս ազգությունների աշխատավորներին հետ միասին ստեղծեցին ամուր յեղբայրական դաշինք խորհրդային էշխանություն հաստատելու, սոցիալիզմ կառուցելու համար մղվող պայքարում»¹:

Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը ջարդեց ցարական Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ուժերը կաշկանդող կապանքները: Աշխատավորները կերտեցին իրենց սոցիալիստական բազմազգ պետությունը—Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, վոչ թե ժողովուրդների ճնշման և բռնության, այլ հոժարակամ միավորման ուղիով:

Սորհրդային էշխանության գոյության քսանամյակին մենք ունենք Սորհրդային Միության տառացիորեն բոլոր ժողովուրդների տնտեսության և կուլտուրայի ծաղկումը: Չե՞ վոր գեռևս վոչ—հեռու անցյալում Միջին Ասիայի, Անդրկովկասի, Դաղստանի, Չեչենո-ինգուշեթիայի և մյուսաների չքավոր գյուղացիությունն իր հողը մշակում էր անհիշելի ժամանակներից պահպանված պրիմիտիվ դործիքներով: Մարդկային ուժերի ամբողջ լարվածության և հսկայական կորստի առկայության պայմաններում այդ պրիմիտիվ մշակումը չնչին արդյունք էր տալիս, վորի յերեք քառորդը խլում էին շորթիչները:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը Միության ժողովուրդներին արթնացրեց դեպի բացառիկ ստեղծագործություն: Թվում է, վոր բանվոր դասակարգի և գյուղացիության հաղթանակի հետ միասին դարեցի ընթացքում կաշկանդված ժողովրդական յետանդը ահռելի ուժով դուրս պոսթիկաց: Հարյուրավոր գրքեր կարելի յեր գրել ամեն մի ժողովրդի ստեղծագործության մասին:

Նայենք անցյալի դյուղատնտեսության վրա, այն դաշտերին և այն անտարբեր մշակմանը, յերբ մարդը կարճեանտեսանելի շղթաներով կապված էր իր անչնորհակալ դաշտերին: Այժմ այդ դաշտերը և նրանց վրա աշխատողները բոլորովին կերպարանափոխվել են: Բամբակի և հացահատիկի դաշտերում լավում է տրակտորների ութմական հոնդոցը. աշխատանքի ամենապրիմիտիվ դործիքը՝ ամաչը կարելի յե տեսնել, թեքևս, միայն թանդարաններում: Կավի յեղրազրվաղներով շրջապատված և տարերային անկարգապահությամբ դասավորված հողամասերը չենին ուրախացնում ժողովրդի աչքը, իսկ այժմ ճիշտ պլանավորված, իրենց մեծությամբ դյուղատնտեսական պահանջներին համապատասխանող—նրանք անչափ գեղեցիկ տեսարան են ներկայացնում: Բայց ամեն բանից գեղեցիկը—այդ դաշտերում աշխատող ժողովուրդն է: Դեմքերի ուրախությունը, չարժումների մտահոնությունը, ինտելիկետությունը, յերիտասարդությունը վոչ միայն տարիքի, այլ և ժողովրդի գիտակցության մեջ—ահա նկարչի վրձինին արժանի տեսարան:

Այն ծանր հողը, վորը ժողովուրդներին շատ սերունդների մշտական չարչարողն է յեղել, այժմ դարձել է ուրախության աղբյուր, յերջանկության աղբյուր, նրա կուլտուրատեսական աշխատավորների հրաշալի կյանքի աղբյուր: Առանց մեծ թվերով ծանրաբեռնելու, յես կասեմ միայն, վոր հումք—բամբակի արտադրությունը 1913 թվին կազմում էր 7,4 միլիոն ցենտներ, իսկ 1936 թվին՝ մոտ 24 միլիոն ցենտներ: Առանձին կորտնտեսությունները, վորտեղ ստեղծագործական ենտուղիաղմը գուղորդվում է բարձր տեխնիկայի և դյուղատնտեսական փորձառության հետ, ձեռք են բերում վոչ միայն սուաջ չտեսնված հաջողություններ, այլև այնպիսի հաջողություններ, վորոնց վրա մենք ել ենք դարմանում: Մի մտածեցե՞ք՝ մեկ հեկտարից ստանալ 100 ցենտներ բամբակ: Մեկ հեկտարի բամբակի ճյուղերի վրա դոնովում է 600 փութ հումք—բամբակ: Մի՞թե այս ապացույց չե այն բանի, վոր յերբեմնի ճնշված ժողովուրդը վերջապես ձեռք է բերել իր յերջանկությունը:

¹ Մոլոտով, Հոգվածներ և ճտեր, էջ 223, Կուսհրատ, 1937 թ.:

Բոլոր հանրապետութիւններում, բոլոր ազգային մար-
զերում զարգացել է արդյունաբերութիւնը, կառուցվում են
Ֆարքիկաներ և զործարաններ, վորտեղ ոռւս ինժեներները,
տեխնիկները և փորձառու բանվորների ոգնութեամբ աճեց-
վում են բանվորների ու տեխնիկական ինտելիգենցիայի
ազգային կազմեր: Առանձնապէս ուրախալի յե նշել, վոր
այդ Ֆարքիկաների և զործարանների զաղչյահները մոտ
կանգնում են ազգութիւններից հազարավոր կանայք, վո-
րոնք միայն քսան տարի սրանից առաջ բառացիորեն ղեռնս
ստրկուհիներ էին՝ թե՛ վորպես աշխատավորուհի և թե՛
վորպես կին:

Մեծ ու բազմակողմանի յե ՍՍՀՄ ազգութիւնների
ստեղծագործութիւնը: Գիտութեան մեջ, տեխնիկայի, գե-
ղարվեստի ասպարեզում՝ ամենուրեք նկատվում է ձևով
ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրա-
յի աննախընթաց բարգաւաճում: ՍՍՀՄ ազգութիւնների
ստեղծագործութիւնն առավելապէս փայլուն կերպով յերե-
վաց ժողովրդական յերգի մեջ, հսկայական քանակութեամբ
յերգեցիկ խմբերի, նվագախմբերի, ինքնագործ թատրոնա-
կան խմբակների կազմակերպման մեջ: Համարյա բոլոր ազ-
գային հանրապետութիւններն ունեն իրենց պետական թատ-
րոնները: Յես մանրամասն չեմ խոսի Ուկրաինայի մասին:
Նրա կուլտուրան անցել է մոտավորապէս նույնպիսի ուղի,
ինչպէս և ոռւս ժողովրդի կուլտուրան: Ուկրաինական ժողո-
վորդը շատ բան է կրել, ոռւս ժողովրդի հետ միասին նա
պայքարել է ինքնակալութեան դեմ, ոռւս ժողովրդի հետ
պարտութիւններ է կրել, հաղթութիւններ է տարել:

Նույնը պետք է ասել և վրաց ժողովրդի մասին, վո-
րը ոռւս ժողովրդի հետ ուս-ուսի տված պայքարել է ցարիզ-
մի, կալվածատերերի և կապիտալիստների դեմ: Վրաց
պրոլետարիատը պատվաւոր տեղ է զբաղում ոռւսական հե-
ղափոխական բանվորական շարժման մեջ: Վրացական կուլ-
տուրան գտնվում է Յեվրոպայի առաջավոր յերկրների
կուլտուրայի մակարդակի վրա: Սորհրդային իրավակարգը
նոր սոցիալիստական բովանդակութեամբ հարստացրեց այդ
կուլտուրան և հանեց այն է՛լ ավելի մեծ բարձունքների վրա:

Ղազախստանի, Ուզբեկստանի, Հայաստանի և մյուսնե-
րի յերգերում, ազգային թատրոնների բեմադրութիւննե-
րում, յերաժշտութեան, ժողովրդական ստեղծագործութեան
մեջ ժողովուրդները, ասես, խայարհալին բանտից դուրս
պրծնելով ղեպի ազատ յերկրի պայծառ արևի ճառագայթ-
ները, մեծ թախով յերեան են բերում իրենց տաղանդները,
գովերգելով ազատ կյանքի բերկրանքը:

Մենք գտնում ենք, վոր Սորհրդային Միութեան սահ-
մաններից դուրս, նույնիսկ ամենաառաջավոր մարդիկ, չեն
գնահատել այդ մեծագոյն պրոցեսի—ժողովուրդների յեղ-
բայութեան ստեղծման ամբողջ խորութիւնը: Իսկ չե՞ վոր
այդ կատարվում է աշխարհում առաջին անգամ: Պատմու-
թեան մեջ մենք չգիտենք և վոչ մի պետութիւն, վորտեղ
այնպէս, ինչպէս Սորհրդային Միութեան մեջ, ազգութիւն-
ները միջև զարգացած լինի յեղբայրութիւնն ու բարեկա-
մութիւնը: Յեվ զարմանալի բան է՝ սրանից քսան տարի
առաջ անվստահութեամբ էին վերաբերվում ղեպի այն
ամենը, ինչ վոր ոռւսական էր, իսկ այժմ Սորհրդային Մի-
ութեան ազգութիւններն ազահորեն ոգտագործում են ոռւս
ընկերների փորձը, ոռւսական արվեստը, գիտութիւնը և
տեխնիկան:

Հակառակ Փաշիգմի, վորն ազգամիջեան ասելութիւն
է հրահրում, Սորհրդային Միութեան ազգութիւնների
միջև մրցութիւն է տեղի ունենում: Ամեն մի ազգութիւն
ձգտում է առաջին տեղը զբաղել՝ բերքատուութեան, աշխա-
տանքի արտադրողականութեան, Ֆարքիկաներում և զոր-
ծարաններում կատարվող աշխատանքի եֆեկտիվութեան
ասպարեզում: Ամեն մի ազգային թատրոն ուղում է առաջ
քաշվել, առաջին տեղը զբաղել և ցույց տալ իր առավելու-
թիւններն ուրիշ թատրոնների հանդեպ: Սպորտի ազգային
խմբերն ուղում են առաջինը լինել Փուտրոյի, տենիսի և
այլ ասպարեզներում: Սակայն այս վոչ մի առնչութիւն
չունի բուրժուական կոնկուրենցիայի հետ: Այս մրցումը
վոչ թե խորթացնում է, այլ հարագատեցնում է, վոչ թե
անջատում է, այլ միացնում է, վոչ թե քանդում է, այլ
յեմենտապատում է Սորհրդային Միութեան ժողովուրդնե-

բին: Ամեն մի ժողովուրդ ուղում է ՆՍՀՄ սոցիալիստական շինարարութեան մեջ պատվալուր տեղ զբաղել: Ուղբեկստանի ամեն մի բանվոր կամ գյուղացի կասի, վոր ինքը վոչ միայն Ուղբեկստանի քաղաքացի յե, այլ ամենամեծ հրճվանքով ասում է, վոր ինքը քաղաքացի յե Նորհրդային Միութեան, վորի մայրաքաղաքն է Մոսկվան:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Նյութական միջոցների և կուլտուրայի զարգացումն աղբյուրն փոքրամասնութիւնների մեջ տեղի յե ունենում վոչ անջատ ձևով—դա կատարվում է ամբողջ Միութեան ժողովուրդների, և առաջին հերթին ուստի ժողովրդի մեջ:

Մարդկանց զիտակցութիւնից ավելի ու ավելի հեռանում, ավանդութիւնները դիրկն է անցնում հին աշխարհն իր նախապաշարմունքներով, իր հետամնաց տեխնիկայով, անհատական աշխատանքով: Նոր, հասարակական, կազմակերպված աշխատանքում, վորտեղ լայնորեն կիրառվում է նոր տեխնիկան, աճում է նոր կուլտուրան, աճում են նոր մարդիկ, խորհրդային մարդիկ, զիտակից կառուցողներ: Կարելի յե համարձակորեն ասել, վոր Նորհրդային Միութեան բնակչութեան հիմնական գործոն մասն իր ճշող մեծամասնութեամբ բաղկացած է խորհրդային նոր մարդկանցից: Այս հաստատվում է պարզ դատողութեամբ. 20 տարի գոյութեան ունի խորհրդային իրավակարգը, և այն մարդիկ, վորոնք խորհրդային իրավակարգի սկզբին 15 տարեկան էին, ներկա մոմենտին 35 տարեկան են դարձել:

Անցած տարիները ինքնին նշանակալից տարիներ են: Այդ տարիները հսկայական լարվածութիւն են պահանջում մարդկանցից: Բավական է հիշել Նորհրդային պետութեան թեպետ կարճ, բայց խորը բովանդակութեամբ լի և գունեղ պատմութիւնը: Նորհրդային նկարիչներն անտարակույս կստեղծեն այս դարաշրջանին արժանի գործեր:

Մեր ստեղծագործութեան վերելքն այնպիսի առանձնահատկութիւններ ունի, վորոնց նմանը չկա վոչ մի ուրիշ յերկրում: Սկսենք թեկուզ այն բանից, վոր մեզ մոտ համարյա ամեն մի գործարանում, ամեն մի կուլտուրատեութեան և խորհանտեսութեան մեջ, ամեն մի հիմնարկութեան մեջ և

բնակավարձկոտնների զգալի մասում կան պատի թերթեր, ինքնակրթութեան, քաղաքադիտութեան ուսումնասիրելու խմբակներ, գեղարվեստի ինքնագործ խմբակներ, դրական խմբակներ և այլն: Այդ աշխատանքի մեջ զբաղված են տասնյակ միլիոնավոր մարդիկ: Միմիայն այդ փաստերն արդեն վկայում են խորհրդային ժողովրդի կուլտուրականութեան աճման մասին, վորովհետև խոսքը տասնյակ միլիոնավոր մարդկանց կուլտուրայի աճման մասին է:

Մի՞թե խորհրդային ժողովրդի կուլտուրայի չտեսնված աճման ցուցանիշը չի հանդիսանում մեր յերկրում ստախանովյան շարժման զարգացումը, վորի մեջ զբաղված է բանմորների ապագա կուլտուր-տեխնիկական վերելքի կորիզը:

Մի՞թե Ստախանովի, Բուսիգինի, Մմետանինի, Դուսյա և Մարուսյա Վինոգրադովաների, Կրիլոնոսի, Դյուկանովի, Յուսիմի, Մազայի—մեր ժողովրդական տնտեսութեան այդ նորարարները—անունները չեն վկայում խորհրդային ժողովրդի կուլտուրայի, քաղաքական զիտակցութեան աճման մասին: Այս վկայում է այն մասին, վոր բանվոր դասակարգի շերտերում ստեղծվում է հոյակապ արտադրորդների ավանդարդ—մարդիկ, վորոնք «կատարելապես տիրապետել են իրենց գործի տեխնիկային և գիտեն տեխնիկայից քամել այն առավելագույնը, վոր կարելի յե քամել նրանից»¹:

Ստախանովյան շարժումը զբաղեց և կուլտուրային գյուղացիութեանը: Ո՞ւմ հայտնի չեն դաշտերի պանծալի ստախանովականների՝ Մարիա Դեմչենկոյի, Պաշա Անդելինայի, Մարինա Գնատենկոյի, Պոլազուտինի, Ոսկինի, Դարյա Մելնիկի, Մամլյաքատ Նախանգովայի, Պաշա Կովարդակի անունները: Կուլտուրատեսականների մեջ մրցումը աճում է խժրն ու լայնորեն: Նորհրդային գյուղի առաջավոր մարդիկ պայքարում են կուլտուրային դաշտերի բարձր բերքատվութիւնն ապահովելու համար, և մենք գյուղատնտեսութեան մեջ ունենք աշխատանքի բարձր արտադրողականու-

1 Ի. Վ. Ստալին, ձառ' արտասանած ստախանովականների համաժողովեանական Առաջին խորհրդակցութեանը, էջ 11, Հայկուհրատ, 1935 թ.:

թյան հիանալի որինակներ, վորոնք բոլորովին անհնարին էին անցյալում: Ջնջվում է քաղաքի և գյուղի միջև յեղած հին դարավոր հակադրութունը: Կոլտնտեսային արտադրութունը, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը, քաղաքական-լուսավորական լայն միջոցառումները դյուրեմս պայմաններ են ստեղծում լիովին վոչնչացնելու այդ հակադրութունը:

Հաճախ դանդաղներ ենք լսում, վոր մեր դրականութունը թույլ է: Գուցե մեր դրականութունը թույլ է համեմատած այն հսկայական աճի հետ, վորը նկատվում է մարդկային դործունեությունից մնացած բոլոր վորոտներում: Բայց «մեր դրականութունը հանդիսանում է՝ բոլոր ժողովուրդների և յերկրների դրականութուններից ամենալեզրիտասարդը: Միևնույն ժամանակ նա հանդիսանում է ամենադադավարական, ամենաառաջավոր և ամենահեղափոխական դրականութունը»¹: Այս դրականութունը խոսում է Խորհուրդների յերկրի ժողովուրդների սոցիալիստական աշխատանքի մասին, Խորհրդային Միութեան յերջանիկ կյանքի մասին: Նա ծագւոյում է սոցիալիստական շինարարութեան դործին: Մեր դրական յերկրի հերոսները—դրանք նոր կյանքի ակտիվ շինարարներն են՝ բանվորները, բանվորուհիները, կոլտնտեսականները, կուսակցականները, ինժեներները, կոմյերիտականները, պիոներները, անտեսափարները, մեր յերկրի թեմատիկան—այդ մեր յերկրի ժողովուրդների ստեղծագործ դործունեությունն է:

Մի՞թե այս բոլորը չի վկայում այն մասին, վոր ԽՍՀՄ դարձել է վոչ միայն առաջավոր արդյունաբերական յերկիր, վոչ միայն աշխարհում ամենախոշոր սոցիալիստական դյուրադրականութեան յերկիր, այլ և առաջավոր սոցիալիստական կուլտուրայի յերկիր:

Բոլորին հայտնի յե, թե ինչպիսի հաջողութուն ունեն միջազգային կոնգրեսներում և կոնկուրաներում մեր դիտնականները, դաշնակահարները, ջութակահարները, ար-

¹ Ժղանով, Խորհրդային դրականութունը ամենադադավարական և ամենաառաջավոր դրականութունն է աշխարհում, էջ 8, 1934 թ.:

տիտները, յերգիչները, պարողները, վազողները, լուզորդները, շախմատիստները:

Բարձրագույն արտահայտութունն այն բանի, վոր մեր կադրերը հաղթահարել են տեխնիկան, վոր մեր յերկիրն ամեն ուր ստեղծում է նորանոր խոշոր կազմակերպիչներ, մարտիկներ, ենտուղիաստներ, հերոսներ, հանդիսանում են Խորհրդային Միութեան հպարտ բաղեների՝ Չկալովի, Բայդուկովի, Բելյաևովի, Գրոմովի, Դանիլինի, Յումաչևի հերոսական թուիչքները:

Իրավունք ունեն մեզ հարցնելու և կհարցնեն՝ ինչո՞վ բացատրել աշխատանքի արտադրողականութեան այսպիսի չտեսնված աճը, խորհրդային ժողովրդի կուլտուրայի աճը, ստեղծագործութեան ծաղկումը մեր յերկրում: Մենք կպատասխանենք ընկեր Ստալինի բառերով՝ «Կյանքն ավելի լաջ է դարձել, ընկերներ: Կյանքն ավելի ուրախ է դարձել: Իսկ յերբ ուրախ ես ապրում, աշխատանքը հաջող է գնում: Դրանից ել ստացվում են արտադրական բարձր նորմաները: Այստեղից ել առաջ են գալիս աշխատանքի հերոսներն ու հերոսուհիները»¹:

ԽՍՀՄ ՀՁՈՐ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ Ե

Մե՞ծ է ու դեղեցիկ մեր հայրենիքը—աշխատավորների հարազատ մայրը դարձած միակ յերկիրն աշխարհում: Ասես թե սրատմութունը հատուցեց նրանց հազարամյա աշխատանքները, նրանց կրած դժբախտութունները և տանջանքները ամբողջ անցյալի համար:

Մեր յերկիրը տարածված է սկսած Սառուցյալ ովկիանոսից՝ նրա կղզիներով և սառցակույտերով հանդերձ, վորտեղ բնութեան հետ պայքարում են խորհրդային հերոսները, մինչև բարեբեր հարավի—Սև ծովի ափերը, սկսած լեհական և լատվիական սահմանից մինչև Խաղաղ ովկիանոսը:

Տերիտորիայի լայնածավալութունը նախորոշել է նաև

¹ Ի. Վ. Ստալին, ձառ՝ արտասանած ստախանովականների Համա-միութենական Ստալին խորհրդակցությունը, էջ 15, Հայկուսհրատ, 1937 թ.:

մեր հողում յեղած հարստութիւնները բաղձազանութիւնները: Հյուսիսը ծածկված և անտառներով, վորոնց վորակը հայտնի յե ամբողջ աշխարհին: Հյուսիսից դեպի հարավ և արևմուտքից դեպի արևելք, բոլոր ուղղութիւններով ձգվում են հաճարի և ցորենի անձայրածիր դաշտերը, վորոնք կարող են կերակրել հարյուր-միլիոնավոր մարդկանց: Այդ դաշտերին միանում են մարդու ձեռքով մշակած ձյունանբ-ման բամբակի հարթավայրերը, թեյի պլանտացիաները, խաղողի այգիները և կոլտնտեսային հրաշալի պարտեզներում հասնում են մանդարին, նարինջ, կիտրոն—խորհրդային իշխանութեան որով մշակված պտուղներ:

Մեր գետերը, լճերը և մեր յերկիրը շրջապատող ծովերը լեռն-լեցուն են ձկների հսկայական պաշարով: Լայնածավալ դաշտերում և մարդապետիններում արածում են խոշոր և մանր յեղջուրավոր անասունների հոտեր: Մեր յերկրի ընդերքը հարուստ է յերկաթի հանքերով, քարածխով, նավթով, վոսկով, հանքային պարարտանյութերով և անասնման քանակութեամբ այլ ողտակար հանքերով:

Տասնյակ-հազարավոր կելիմետրերի վրա ձգվում են յերկաթուղիների պողպատե ուղիները:

Մեր ծովերին ու ջրառատ գետերին խորհրդային մարդիկ միացրին ջրանցքներ, վորոնց վրայով հարավից դեպի հյուսիս, արևմուտքից դեպի արևելք և դեպի հեռ ուղեւորվում են անհամար բեռներ—մարդու արտադրողական աշխատանքի արդյունքը:

Անտառները, ընդերքի հարստութիւնները, բանվորների և կոլտնտեսականների արտադրողական աշխատանքը, տեխնիկային տիրապետելը հնարավորութիւն տվին լայնորեն ծավալելու յերկրում ինդուստրիալ շինարարութիւնը: Ստեղծվել են հազարավոր Փարրիկաներ և դործարաններ, էլեկտրոկայաններ: Մեր գետերը, ինչպիսիք են Դնեպրը, Վոլգայը, վորոնք անցյալում ողնում էին միայն բեռներն փոխադրմանը, այժմ տալիս են ահագին քանակութեամբ էլեկտրական էներգիա: Ստեղծված են աշխատանքի նոր ձեւեր, վորոնք հին ցարական Ռուսաստանի ուժերից վեր ելին: Վերստեղծված է մետաղադործական արդյունաբերու-

թիւնը, վորը անհամեմատելի յե նախկինի հետ. կառուցված են ավտոմոբիլային և տրակտորային դործարաններ. ստեղծված է ավիացիոն արդյունաբերութիւն. արտադրվում է սինթետիկ կաուչուկ, ստեղծված է քիմիական արդյունաբերութիւն, վորը տարեցտարի բարձրացնում է կոլտնտեսային դաշտերի համար անհրաժեշտ քիմիական պարարտանյութերի արտադրութիւնը: Այս ամենը, հին ցարական, ագրարապէս աղքատ Ռուսաստանը, վորտեղ դերակառուցում էր դյուղացիական պրիմիտիվ աշխատանքը, դարձրեց բարձր դարգացած ինդուստրիալ յերկիր, վորը կոչվում է ինքնուրույն Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւն:

Հին ցարական Ռուսաստանը մտնում էր մեծ տերութիւնների կազմի մեջ: Այդ նրան չէր խանդարում նրանց հարկատուն լինելու: Մակայն, Ռուսաստանից ահագին շահույթներ ստացող յերկրներն էլ պարտքի տակ չէյին մտնում: Ֆարիզմի և ուսա տիրող դասակարգի համար ծանր րոպեներին այդ յերկրները նրանց ողնութեան ելին դալիս իրենց դրամական պարկով: Այդպէս յեղավ 1905 թվին, յերը թվում էր՝ ահա վորտեղ վոր է հեղափոխական բանվոր դասակարգը և դյուղացիութիւնը մահացու հարված կհասցնեն ցարիզմին: Այդ ժամանակ Փրանսական բանկիրները վրկութեան հասան իրենց «կլիենտոլերային»:

Կապիտալիստական աշխարհի պարագլուխները մեղ, ինքնուրույն Միութեանը, չեն սիրում, իսկ յեթե խղճով ասենք, ատում են չար ատելութեամբ: Ասենք՝ ատելու պատճառներ կան: Առաջինը, մենք զրկեցինք նրանց մեր բանվորներին շահագործելու, մեր հողի ընդերքն ողտադործելու հնարավորութիւնից. յերկրորդը, և այդ գլխավորն է, մենք տապալեցինք մեր կապիտալիստներին: Մեղ մոտ իշխանութեան գլուխ են կանգնած բանվոր դասակարգն ու դյուղացիութիւնը—սրանով իսկ մենք աշխարհի բոլոր աշխատավորներին որինակ ցույց տվինք, վոր աշխատավորները կարող են յուրա դնալ առանց կապիտալիստների: Ահա այս բանը կապիտալիստները վոչ մի կերպ ներել չեն կարողանում: Սրանումն է հենց նրանց ատելութեան հիմքը և

միևնույն ժամանակ նրանց անասնական սաբսափը Խորհրդա-
դաշին Միութեան հանդեսը:

Ավագակալին Ֆինանսական կապիտալի զինակիցները—
Փաշխտները, մոլեղներեն տարված են մի մտքով—կործա-
նել Խորհրդաշին Միութեանը: Նրանց հրապուրում են մեր
յերկրի հսկայական տարածութունները, նրա մշակված
դաշտերը, նորակառույց հիանալի Փարբիկաներն ու դոր-
ծարանները. նրանց զբաղում են մեր ընդերքի հարստու-
թյուններն ու մեր անտառները. նրանց զբաղում են մեր
աշխատավորների արտադրողական աշխատանքով ստեղծ-
ված հարստությունները: Սոված շնադաշների նման չըջում
են այդ զիշատիչները մեր սահմանների յերկայնութեամբ,
ձգտելով մի սողանք գտնել մեր տերիտորիան մտնելու հա-
մար: Բայց ամուր են մեր սահմանները: Նրանք պահպան-
վում են մեր փառապանծ Կարմիր Բանակի մարտիկներին
կողմից: Այս կամ այն տեղում պատահամար մեր սահմանն
անցած այդ զիշատիչների առանձին փորձերը նրանց հա-
մար փողբալի վախճան էլին ունենում: Մեր մարտիկները
անողբաբար հաշիվ էլին տեսնում:

Մեր բանակը, ժողովրդական բանակը, աջալըջոբեն
պահպանում է Խորհրդաշին յերկիրը, նրա խաղաղ սոցիա-
լիստական աշխատանքը: Յեվ ուրիշ կերպ չէր էլ կարող լի-
նել: Չէ՞ վոր մեր բանակը—այդ՛ կոլտնտեսային գյուղա-
ցիութեան, բանվոր դասակարգի և ԽՍՀՄ բոլոր ադնիվ քա-
ղաքացիներին լայնադույն զալակներն են: Աշխարհում և վոչ
մի տեղ չկա այսպիսի կապ—հարազատություն ժողովրդի
և բանակի միջև: Մեր Կարմիր Բանակը—զա ժողովրդի լա-
վազույն մասն է: Նա ժողովրդի հետ միասին հաղթահա-
րում է ճանապարհին հանդիպող խոչընդոտները, նա ժողո-
վրդի հետ միասին հաղթահարում է բնութեան ուժերը,
նա ժողովրդի հետ միասին նվաճում է կուլտուրա, լավա-
զույն ապագա: Նա ժողովրդի հետ միասին, վորպես նրա
անկապտելի մասը, անձնվիրաբար պաշտպանում է և
կպաշտպանի Խորհրդաշին Միութեան ամբողջականություն-
ներն ու անձեռնմխելիությունը, մեր յերկրում բնակվող
բոլոր ժողովուրդների յերջանկությունը:

Մեր հայրենիքը սքանչելի յե: ԽՍՀՄ բոլոր ժողովուրդը—
ներն անսահմանորեն սիրում են նրան և չեն կարող չսիրել:
Չէ՞ վոր նա յերկրագնդի միակ մասն է, վորտեղ աշխատա-
վորական մասսաները, բանվոր դասակարգը, գյուղացիու-
թյունն իրենց յերջանկութեան տերերն են հանդիսանում.
չէ՞ վոր նա միակ յերկիրն է, վորտեղ իշխանութեան գլուխ
են կանգնած բանվորներն ու գյուղացիները: Կապիտալիս-
տական յերկրներում պրոլետարիատը հայրենիք չունի: Այն-
տեղ կապիտալիստների հայրենիքն է: Խորհրդաշին Միու-
թյունը—զա աշխատավորների հայրենիքն է: Միլիոնավոր
մարդիկ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութեան
օրից իվեր գտել են իրենց իսկական հայրենիքը, իրենց
կրծքով են նրան պաշտպանել և պաշտպանում են թշնամի-
ների դեմ մղվող պայքարում: Ի՞նչպես չսիրենք մենք նրան,
ի՞նչպես չպայքարենք մենք նրա համար:

Խորհրդաշին մարդկանց հայրենասիրությունն արտա-
հայտվում է սիրով ու համերաշխ մշակված դաշտերով, հո-
յակապ կառուցված Փարբիկաներով և դործարաններով,
յերկրի հասարակական կյանքին լայն մասսաների ցույց
տված ակտիվ մասնակցութեամբ, իրենց կուլտուրականու-
թյունը բարձրացնելու ձգտումով: Այս հայրենասիրություն-
ը յերևան է գալիս ամեն մի կարմիր-բանակային զիտակ-
ցութեան մեջ, վոր նրա պահպանութեան տակ մեր հայրե-
նիքը անմատչելի յե Խորհրդաշին Միութեան բոլոր թշնամի-
ների համար: Դրա համար էլ ժողովուրդը, փոքրից մինչև
մեծը, սրտատուչ հոգատարություն և սեր է ցուցաբերում
դեսի իր Կարմիր Բանակը:

Բանվոր դասակարգը և գյուղացիությունը իշխանու-
թյունը վերցրին հոշոտված յերկրում, վորտեղ գերակշռում
էր ավերված գյուղացիությունը, քանդված Փարբիկաներն
ու դործարանները: Յերկիրը լեցուն էր ժողովրդի թշնամի-
ներով, վորոնք պատրաստ էլին մի արծաթով վաճառելու
իրենց հայրենիքը: Արևելքից և Արևմուտքից գալիս էլին
նրա վրա օտարերկրյա զորքերը, վորոնք ծարավի էլին հա-
մեղ պատառը պոկելուն:

Քսան տարվա ընթացքում ԽՍՀՄ ժողովուրդները

չառ բան են արել: Նրա բոլոր անկյունները մաքրված են ինտերվենտներից, յերկիրը հսկայական չափով աճում է նյութապես և կուլտուրապես, վորով և ամբանում է նրա սաղմական հղորդությունը: Խորհրդային Միության ձայնը միջազգային հարաբերությունների Վոլիմպոսում ալիլի ու ալիլի բարձր է հնչում: Այդ ձայնին ալիլի ու ալիլի ուշադիր ախանջ են դնում վոչ միայն ԽՍՀՄ բարեկամները— աշխատավոր մասսաները, այլև թշնամիները:

ԽՍՀՄ բանվորների և գյուղացիների մեծ յերկիրն է:

ԿՈՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՎԱՆԳԱՐԴՆ Ե

Հարյուր—հազարավոր մարդիկ հարց են տալիս իրենց՝ վո՞րբեղից են վերցվում Խորհրդային Միության ժողովուրդների ներքին ուժերը: Ի՞նչն է նրանց հղորդածման գրգռապատճառը:

Այդ հարցի պատասխանը շատ պարզ է, ամեն վոք կարող է այն գտնել. դա կոմունիստական կուսակցությունն է: Նրա ղեկավարությունն ենք ընտանու տարուց ալիլի պայքարում և մեր յերկրի բանվոր դասակարգը, նրա ղեկավարությունամբ բանվորներն ու գյուղացիներն իշխանություն ձեռք բերին, նրա ղեկավարությամբ մենք մեր յերկրում հաղթեցինք ցարիզմին ու կապիտալիզմին և նրա ղեկավարությամբ մենք կառուցեցինք սոցիալիզմ: Այն բոլորն, ինչ վոր կատարվում է Խորհրդային Միության մեջ, դա կոմունիստական կուսակցության ծրագրի իրագործումն է: Կոմունիզմը վոզեորում և վարակում է մարդկանց մեծագույն պաթոսով, կոմունիզմը վոզեչնչում է Ֆիդիկական հասարակ աշխատանքը, լցնելով այն խորը գաղափարական բովանդակությամբ:

Բանվոր դասակարգի և գյուղացիության լավագույն գալակները, աշխատավորների ամենակտիվ մասը մտնում է կոմունիստական կուսակցության մեջ, մտնում է նրա համար, վորպեսզի պայքարի բանվոր դասակարգի և գյուղացիության գործի համար: Յեվ ուրիշ կերպ չի ել կարող լինել:

Կոմունիստական կուսակցությունը չունի իր սպեցիֆիկ շահերը, չունի իր հատուկ նպատակները: Նրա շահերը, նրա նպատակները—դա բանվոր դասակարգի և կուլտուրապես գյուղացիության շահերն ու նպատակներն են: Կոմունիստական կուսակցությունը ձևակերպում և վորոշում է այն նպատակները, վորոնց պետք է ձգտի ժողովուրդը, կազմակերպում և կենտրոնացնում է այն միջոցներն ու հնարավորությունները, վորոնցով կարելի յե հասնել այդ նպատակների իրագործմանը, ղեկավարում է նշված խնդիրների կատարումը:

Կոմունիստական կուսակցությունը սերտորեն կապված է մասսաների հետ—և չի ել կարող կապված չլինել նրանց հետ: Կոմունիստական կուսակցությունը ձգտում է դրված նպատակներն իրագործելու միայն մասսաների հետ միասին, արտահայտելով նրանց շահերը, կազմակերպելով նրանց, սրբղաբանելով և ուղղելով նրանց հասնելու այդ նպատակներին: Մասսաների հետ կուսակցության սերտ կապի կորուստը կլիներ նաև նրա կոմունիստական բովանդակության կորուստ:

Աշխատավոր մասսաները և կոմունիստական կուսակցությունը—այդ մի ամբողջություն է: Իզուր չէ, վոր Լենինի հիշատակը վոչ միայն սպրում է, այլ ալիլի ու ալիլի տեղեր է դրավում մարդկանց գլխակցություն մեջ: Իզուր չէ, վոր Ստալինի անունը միլիոնավոր մարդկանց սրտերում հիացմունք, ուրախության և մտերմության զգացմունք է առաջ բերում: Ստալինի հետ, վորպես կոմունիստական գաղափարների արտահայտչի, կապված է ուսական սոցիալիստական մեծ հեղափոխության առաջնիթաց շարժման ամբողջ պատմությունը, նրա հետ են կապված ակնկալությունները, հույսերը և Խորհրդային Միության ժողովրդական մասսաների արդեն ձեռք բերած հաջողությունները: Վորպես արձագանգ այդ համաժողովրդական սիրո, հնչում են ընկեր Ստալինի խոսքերը՝ «կարող եք չտարակուսել, ընկերներ, վոր յես պատրաստ եմ առաջիկայում ել բանվոր դասակարգի գործին, պրոլետարական հեղափոխության գործին և համաշխարհային կոմունիզմի գործին նվիրելու

իմ բոլոր ուժերը, իմ բոլոր ընդունակութիւնները, և յեթե կարելք լինի, իմ ամբողջ արյունը, կաթիլ առ կաթիլ»¹ :

Կոմունիստական կուսակցութիւնը ջահն և հանդիսանում պատմական այն ուղու, վորով ընթանում են ԽՍՀՄ ժողովուրդները: Կոմունիստական կուսակցութիւնը ազնւրկացնում է, վարակում է ենտուղիազմով, առաջացնելով մասսայական հերոսութիւն և նրա դաշակներէ մեջ բացառիկ սեր զեպի սոցիալիստական հայրենիքը:

Խորհրդային Միութեան ժողովուրդները կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ պայքարում էյին իրենց լավագոյն ազգայն համար: Կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ նրանք այժմ հաղթանակից հաղթանակ են դնում: Ընկեր Ստալինի ղեկավարութեամբ Խորհրդային Միութեան ժողովուրդները կը նվաճեն կոմունիզմը:



Յերբ հայացք ես դցում անցած ուղու վրա, վորի սկիզբն էր Մեծ սոցիալիստական հեղափոխութիւնը, ահամաքեզ համակում է հիացմունքի, զարմանքի զգացմունք աշխատավոր մասսաների ստեղծազորական ուժերի հանդեպ, նրանց հերոսութեան հանդեպ, մեր կուսակցութեան իղեալներէ համար մզվող պայքարում նրանց ցուցաբերած անսահման նվիրվածութեան հանդեպ: Այդ ստեղծազորական ուժերն ալիքի փայլուն կերպով արտացոլված են Խորհուրդներէ VIII Համամիութենական Արտակարգ Համաշուկարում ընդունված ԽՍՀՄ Սահմանադրութեան մեջ: Ժողովուրդն այն անվանում է մեծ Ստալինյան Սահմանադրութիւն:

Սահմանադրութիւնն իր հակիրճ ձևակերպումներում աշխատավոր մասսաների համար է հաստատել, իրավարանորեն ամրացրել է այն, ինչ վոր նրանք ձեռք բերել ու նվաճել են:

Ստալինյան Սահմանադրութեան ստեղծումն ու ընդունումը պատմական մեծ քայլ է զեպի առաջ ԽՍՀՄ ժողովուրդների զարգացման գործում, ժողովրդապետութեան

զարգացման գործում: Մինչդեռ կապիտալիզմի յերկրներում կործանվում են դեմոկրատիայի առանց այն էլ խղճուկ ձեւերը, իսկ մի շարք յերկրներում դեմոկրատիան բոլորովին ճնշված է և փոխարինված է Փաշիզմով, Խորհրդային Միութիւնը անց է կացնում ընտրական սիստեմի հետագա դեմոկրատիզացիան, ներգրավելով բանվորներին և դուրդացիներին պետական կառավարչութեան մեջ, ընդարձակելով բանվոր դասակարգի ղեկատուութեան պետական ղեկավարման ալիքի ճիւղն, հետևաբար՝ ալիքի հզոր սիստեմի...»¹:

Ամբողջ Խորհրդային իշխանութիւնը վերից վար, սկսած ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդից մինչև դուրդական խորհուրդը, ընտրվում է ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ դադանի քիւարկութեամբ: Այդ նշանակում է՝ ժողովրդական վերահսկողութեան ուժեղացումը պետական որդաններէ աշխատանքի վերաբերմամբ: Այդ նշանակում է, վոր իշխանութեան ամեն մի կրողին հետեւելու յեն նրա հազարավոր ընտրողները: Այդ նշանակում է, վոր իշխանութեան այս կամ այն ներկայացուցչի շարակութիւններէ, սխալներէ և աշխատել չիմացուցչի շարակութիւններէ, սխալներէ և աշխատել չիմացուցչի համար ընտրողը չի կարող ներքուստ բարոյական իր պատասխանատուութիւնը չզղբալ նրա համար: Այդ, իր հերթին, ժողովրդական մասսաներէ մեջ զարգացնում և ամրապնդում է պետականութեան ղեկակցութիւնը, պատասխանատուութիւնը Խորհրդային սոցիալիստական պետութեան առաջադիմութեան և ամբողջականութեան համար:

ԽՍՀՄ Սահմանադրութիւնը լայնորեն ծախալում է Խորհրդային դեմոկրատիան: Նա չի սահմանափակվում քաղաքացու իրավունքները հայտարարելով, այլ առահովում է այն՝ որինական կարգով: «Ուստի հասկանալի յէ, վոր նոր Սահմանադրութեան նախադի դեմոկրատիզմը հանդիսանում է վոչ «սովորական», «ընդհանուրի կողմից ճանաչ-

¹ «Պրավդա», 22 դեկտեմբերի 1929 թ.:

¹ Ի. Վ. Ստալին, ԽՍՀ Միութեան Սահմանադրութեան նախագծի մասին, էջ 38, Հայկուսհրատ, 1936 թ.:

ված» ղեմնկրատիզմ ընդհանրապես, այլ «սոցիալիստական» ղեմնկրատիզմ»¹ :

Սահմանադրութունը ղեմնկրատականացնում է նաև խորհրդային դատարանը, վորն ընտրվում է ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ դադանի քվեարկությամբ: Խորհրդային իշխանութունը ժողովրդի ձեռքն է հանձնում պետական բացառիկ կարևորութուն ունեցող մի ինստիտուտ, վորն աշխատավորներին ճշման գործիք է ծառայում կապիտալի բոլոր յերկրներում: Այսպիսի բան կարող է անել միայն ժողովրդական իշխանութունը: Այս փաստի մեջ պարզորեն արտացոլում է խորհրդային իրավակարգի ամբողջ սխտեմը:

Շատ ջանք է գործադրել ժողովուրդն իր հողը ոտարերկրյա ինտերվենտներին ձեռքից խլելու համար, շատ արյուն է թափվել ցարական վոճմակի ղեմ մղված կռվում: Բանվորներին, դյուղացիներին և խորհրդային բոլոր աղնիվ քաղաքացիներին կողմից մեծ ուժ է դրված Խորհրդային պետության կառուցման վրա, արդյունաբերության և դյուղացիականության զարգացման վրա, Խորհրդային Միության ժողովուրդներին կուլտուրայի զարգացման վրա:

Վորպես արդյունք հերոսաբար անցած այս ուղու՝ ժողովուրդն ունի «պատմական փաստաթուղթ, վորը պարզ ու սեղմ, համարյա արձանագրական վոճով, խոսում է ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի տարած հաղթության մասին, կապիտալիստական ստրկությունից ԽՍՀՄ աշխատավորների ազատագրման փաստերի մասին, ԽՍՀՄ մեջ ծավալուն, մինչև վերջը հետևողական ղեմնկրատիայի հաղթության փաստերի մասին...

Վորպես արդյունք պայքարի ու զրկանքների անցած ուղու՝ հաճելի ու բերկրալի յե ունենալ իր սեփական Սահմանադրութունը, վորը խոսում է մեր հաղթությունների պտուղների մասին: Հաճելի և բերկրալի յե գիտենալ, թե ինչի համար են մարտնչել մեր մարդիկ և ինչպես են ձեռք բերել նրանք համաշխարհային-պատմական հաղթություն-

¹ Ստալին, ԽՍՀ Միության Սահմանադրության նախադժի մասին, էջ 23, Հայկուսհրատ, 1936 թ.:

նը: Հաճելի և բերկրալի յե գիտենալ, վոր մեր մարդկանց առատորեն թափած արյունը ապարդյուն չի անցել, վոր արդյունքներն է ավել: Դա հողեպես գիտնում է մեր բանվոր դասակարգին, մեր դյուղացիությանը, մեր աշխատավոր ինտելիգենցիային: Դա առաջ է շարժում և բարձրացնում է որինական հպարտության գրացմունքը: Դա ամբարպնդում է հավատը դեպի մեր ուժերը և մոբիլիզացիայի յե յենթարկում նոր պայքարի՝ կոմունիզմի նորանոր հաղթություններ նվաճելու համար»¹ :

Ահա թե ինչու համար աշխատավոր մասսաներին մոտ է, թանդ և սիրելի յե սոցիալիստական հայրենիքը: Ահա թե ինչու աշխատավոր մասսաները խանդավառ սիրով են սիրում իրենց առաջնորդ ընկեր Ստալինին:

Կուսակցության և նրա առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ համարձակ քայլերով առաջ, դեպի կոմունիզմ:



¹ Ստալին, ԽՍՀ Միության Սահմանադրության նախադժի մասին, էջ 63, Հայկուսհրատ, 1936 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Ինչ ձեռք բերին ԽՍՀՄ բանվորները	5
Կոլտնտեսային գյուղացիութունը խորհրդային իշխանության հավատարիմ հենարանն է	15
Խորհրդային ինտելիգենցիան	23
ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության յերկիր է	27
Փողովրդական ստեղծագործության վերելքը	34
ԽՍՀՄ հզոր տերություն է	37
Կոմունիստական կուսակցությունը աշխատավորների ավանգարդն է	42

Թարգմ. Ա. Գարագյուզյան
 Խմբագիր Բ. Ն. Դավթյան
 Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
 Սրբագրել է Վարդապետյան
 Կոնսուլ սրբագրել է Աբովյան

Դրավիտի լիազոր Ն. 2916 հրատ. № 754
 Պատվեր № 239, տիրաժ 5000
 Հանձնվել է արտադրության 5/XI 1939 թ.
 Ստորագրվել է տպագրելու 22/XI 1939 թ.
 Գինը 4⁵ Կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան,
 Յերեան, Ալլահվերդյան № 65

<< Ազգային գրադարան



NL0187849

9.6.62, 45 ч.

М. И. КАЛИНИН

ЧТО ДАЛА СОВЕТСКАЯ ВЛАСТЬ ТРУДЯЩИМСЯ

Государственное издательство политической литературы

Ереван 1939